Անհամապատասխանութիւնը գոյութիւն ունի նույնիսկ այնպիսի մոմենտում, յերբ դեռահաս բանվորների բացարձակ թիւն ամեն շինարարական տարի աճում է: և սովորաբար տեսակետից նույնիսկ այդ աճումն ավելի արագ է կատարվում, քան բանվոր դասակարգի ընդհանուր թվի աճումը: Պերճախոս կերպով այդ են ասում մեր բերած թվանշանները, վոր առնված են բանվոր յերիտասարդութեան անտեսական գրութեան վերաբերյալ տեսութիւններից:

ՆՍՄ ՂԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՆՁԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՌԱՀԱՍ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ

Առ 1/1 1925 թ. և առ 1/1 1926 թ.

(Կենտրոնական տվյալներով)

Հանրապետությունների անունները	Առ 1/1 1925 թ.		Առ 1/1 1926 թ.	
	Բոլոր բանվորները	Դրանց թվում գեռահասաները	Բոլոր բանվորները	Դրանց թվում գեռահասաները
1. ՌՍՖՖՆՀ . . . . .	1,356,622	70,009	1,766,996	100,266
2. Թյուրքմենստանի իՍՂ . . . . .	1,670	151	2,782	143
3. Ազրբեյջանի իՍՂ . . . . .	8,910	455	12,248	467
4. Բելոռուսիայի իՍՂ . . . . .	12,519	864	17,774	1,170
5. Աւերայիայի իՍՂ . . . . .	342,519	17,079	515,767	8,903
6. Անդրկովկասի իՍՂ . . . . .	—	—	65,275	3,041
<b>Ամբողջ իՍՄ</b>	<b>1,769,848</b>	<b>90,864</b>	<b>2,380,842</b>	<b>133,990</b>

Այս աղյուսակը վառ կերպով վկայում է, վոր ցենզային արդյունաբերութեան մեջ գեռահասաների թիվը շատացել է՝ 90,864-ից հասնելով 133,990 կամ 43,126 (44%)<sup>0</sup>: Հասակավոր բանվորների թիվը շատացել է՝ 1,769,848-ից հասնելով 2,380,842 կամ 610, 9 հազարով (35%)<sup>0</sup>:

Դեռահաս բանվորների բացարձակ թվի այսպիսի աճումը պետք է դիտել իբրև մի աճում, վոր տեղի յե ունենում արդյունաբերութեան լայնացման հիմքի վրա, և վոչ թե արտադրութեան մեջ դեռահասաների բրոնյայի մեծացման հաշվին, վորովհետև այդ շրջանում գեռահասաների բրոնյայի սովորը համարյա չի ավելացել:

Ընկերներ, իսկ ինչ պետք է ձեռնարկենք մենք այժմ, ինչ գիծ ձեռնենք, վորպեսզի դեռահաս բանվորների թիվը համապատասխան



դառնա արդյունաբերութեան պահանջներին՝ Մենք պետք է ավելի լուրջ կերպով մեր առաջ զննք դեռահասաների բրոնյայի վերաքննման հարցը։ Ահա ինչ ենք գրում մենք «արտադրական կյանքին յերիտասարդութեան մասնակցութեան և ՀամԼԿՅԵՄ տնտեսական աշխատանքի խնդիրներին» վերաբերյալ բանաձևի նախագծում. «Կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում վերաքննել դեռահասաների բրոնյայի գործող նորմերը՝ նպատակ ունենալով նրանց մաքսիմալ չափով կապել արդյունաբերութեան փաստական կարիքների հետ, վորի համար բրոնյայի գործող տոկոսը հաշվել միայն վորակյալ բանվորներին կատարմամբ Կոնֆերենցիան կարծում է, վոր դեռահասաների նոր սահմանվող բրոնյան պետք է դիտվի իբրև ֆարգավուչի դավորոցների, բրիգադային աշակերտութեան և այլն ուսումն անցած աշակերտներին մինիմալ քանակ, վոր հարկավոր է վորակյալ բանվորական ուժը վերականգնելու համար։ Դեռահասաների բրոնյան լրացնելու ժամանակ հարկավոր է առավելութուն տալ բանվորների յերեխաներին։ Կոնֆերենցիան հատուկ կերպով միութեան տեղական կազմակերպութեաններին և Կենտկոմի ուշադրութեանը հրավիրում է այն բանի վրա, վոր անհրաժեշտ է ձգտել ՀամԿԿ(բ) Կենտկոմի վորոշման կենսագործմանը, վորպեսզի ընթացիկ տարում ձեռնարկութեանների մեջ փաստորեն զբաղված դեռահասաների քանակը չնվազի։ Կոնֆերենցիան հանձնարարում է Կենտկոմին մասնակցել բրոնյայի գոյութեան ունեցող նորմերի վերաքննութեանը։

Ինչպես յերևում է, այն տոկոսը, վոր այժմ մեզ մոտ կա, պետք է վերաքննենք այն նկատումով, վորպեսզի նա հետագայում ամբողջովին հարմարեցվի այն պահանջին, վոր արդյունաբերութեան ունի վորակյալ բանվորական ուժի վերաբերյալ։ Պարզ է, վոր այստեղ կոնֆերենցիայում ընդունած այսպիսի վճիռը չափազանց մեծ նշանակութեան ունի։ Հնարավոր է, վոր նա վորոշ հարված կհասցնի դեռահասան բանվորների կայունութեանն արտադրութեան մեջ, բայց այդ հարվածն իբ ուժը կպահի մեր ընդունած վճռի իրականացման միայն առաջին շրջանում։ Իսկ հետագայում դեռահասաների բրոնյան կարող է բարձրանալ ու հատնել վոշ միայն այն դրութեանը, վոր այժմ գոյութեան ունի, այլև շատ ավելի բարձր դրութեան, վորովհետև նեՊ-ի սկզբին դեռահասաների բրոնյան անցկացնելու ժամանակ դրութեանը շատ ավելի վատ էր, իսկ այժմ այդ դրութեանից մենք արդեն վաղուց իվեր դուրս ենք յեկել։ Այս կապակցութեամբ հարկավոր է Էջ ավելի վճռական կերպով ընդգծել այն հանգամանքը, վոր ներկա պայմաններում դեռահասաների բրոնյայի նշանակութեանը մեծ չափով բարձրանում է։ Այժմ մեզ մոտ աշխատանքի բողոսներում գործագուրկ վորակյալ բանվորների թիվն ընդամենը 190 հազար է, մինչև

դեռ առաջիկա տարում վորակյալ ուժի պահանջը հավասար և 130—150 հազարիւ Հաշվի առնելով այն դրությունը, վոր դեռահասաների բրոնյան պետք և հանդիսանա վորակյալ բաճկորակաց ուժի ցախապարասամաց զլիսավորագույն ուղիներից մեկը,—բրոնյայի հարցերը, տվյալ վճռի ընդունման դեպքում, այժմ այնպես սուր և սարսափելի ձևով չեն կանգնի մեր առաջ, ինչպես վոժմանք պատկերացնում են: Յեղբարփակման մեջ կանգ առնենք նաև վորակյալ բանվորական ուժի նկատմամբ բրոնյայի տոկոսը հաշվելու մեթոդների հարցի վրա: Արդեն այժմ ձայներ են լսվում, վոր մեր ընդունած վճռի կապակցությամբ, իբր թե դեռահասաների բրոնյայի տոկոսը պետք և կրճատվի ավելի քան 50% ամբողջ արդյունաբերության մեջ: Այսպիսի հայտարարություն անել, դրա համար չունենալով ճշգրիտ տվյալներ և համապատասխան հիմունքներ, բողբոփին անտեղի յե: Յեթե մենք մտենանք դեռահասաների բրոնյան հաշվելու ելությանն այն վորակյալ բանվորական ուժի նկատմամբ, վորը ներկա պայմաններում ունենք, ապա այժմյան դրության համեմատությամբ դեռահասաների բրոնյայի փոփոխության տարբերությունը մեծ չի լինի, խակ յեթե մեծ չի լինի, ապա արդեն այս այնպես սիմտպոզատիկ չի, ինչպես վոժմանք պատկերացնում են: Ահա, որինակի համար, ինչ ենք տեսնում մենք մետաղարդյունաբերության մեջ: Մետաղարդյունաբերության մեջ զբաղված բանվորների ընդհանուր թիվը հավասար և 600 հազարի, նրանցից վորակյալ բանվորներ են 297 հազարը: Վորակյալ բանվորական ուժի ամենամյա ընական նվազումը հավասար և 4,1%<sub>0</sub>, կամ 12½ հազարի: Բացի այդ, Պետպլանի կոնտրոլ թվերն ասում են, վոր 1926/27 թ. մետաղարդյունաբերության լայնացումը յենթադրում և վորակյալ բանվորական ուժի թվի մեծացում 2,6%<sub>0</sub>, վոր անում և 7,700 մարդ: Մետաղարդյունաբերության վորակյալ բանվորական ուժի ամենամյա կարիքի ընդհանուր թիվը, այսպիսով, հավասար և մոտ 19,9 հազարի: Յեթե ուշադրության առնենք, վոր ուսուցման ժամկետը յերեք տարի յե, և վոր մեզ մոտ ամեն տարի դեռահասաների բրոնյայից դուրս են գալիս 20%<sub>0</sub>, ապա բանվորական ուժի պահանջը հավասար կլինի 71,506 մարդու: Այս թվանշանները, վոր նկատի ունեն վորակյալ բանվորական ուժը, ցույց են տալիս, վոր մետաղարդյունաբերության մեջ վորակյալ բանվորական ուժի նկատմամբ դեռահասաների բրոնյան մեզ մոտ պետք և կազմի 24,2%<sub>0</sub>, իս մետաղարդյունաբերության մեջ զբաղված ամբողջ մարդկային կազմի նկատմամբ նա պետք և լինի 10,5%<sub>0</sub>: Իսկ այժմ մետաղարդյունաբերության մեջ ամբողջ բանվորական ուժի նկատմամբ բրոնյայի %<sub>0</sub> սահմանված և 8: Այս ասում և, վոր մեր ընդունած վճիռները մեծ վտանգ չեն սպառնում:

նման հարաբերութիւններ գոյութիւն ունեն նաև մնացած արտադրութիւնների համար:

Յերկրորդ վորակյալ բանվորների թվի նկատմամբ ղեռահասաների քրոնյան հաշվելու հարցը կարող է այն ձևով զրվել, վոր քրոնյայի յեղարկած ղեռահասաների բացարձակ բաժնակը սահմանվում է միջվճույնի քի ինչ ձեվով, բայց ամեն մի ձեռահարկույթան մեջ ղեռահասաների քիվը վորոշելու համար որեհնում մասնագնվում է քրոնյայի  $\%$  վոյ քի բանվորների ու ծառայողների ընդհանուր թվի, այլ վորակյալ բանվորների քիի ճկատմամբ (քերած որինակում վոյ թի 10,5 $\%$ , այլ 24,2 $\%$ ):

Այս ճանապարհով հասնում են քրոնյայի նորմի վոնչ բարձրացման և վոնչ ել ցածացման, այլ միայն քրոնյայի յենթարկած ղեռահասաների միքիչ ուրիշ ձևի բաշխման ըստ ձեռնարկութիւնների: Այնտեղ, վորտեղ ավելի շատ վորակյալ բանվորներ կան, այնտեղ ավելի քան ել ղեռահասաներ կլինեն:

Բայց վորովհետև սովորաբար միևնույն արդյունաբերութիւն ղանազան ձեռնարկութիւններում վորակյալ բանվորների քանակի տատանումը մեծ չէ, ապա առանձին ձեռնարկութիւններում ղեռահասաների քանակի եյական փոփոխութիւն չի կարող լինել, յերբ ղեռահասաների քրոնյայի  $\%$  հաշվելու յեղանակը փոփոխվի:

Ընկերներ, ղեռ հարկավոր է կանգ առնել այն բանի վրա, թի վոր վորակյալ ուժի նկատմամբ պետք է հաշվել ղեռահասաների տոկոսը: Այն բանի վրա, թի ում պետք է հասկանալ վորակյալ բանվորական ուժ սակով: Յեթի սկսենք այս ձևով հաշվել, ստիպված ենք շոշափել ամեն մի ձեռնարկութիւն, ամեն մի արհեստի հարցն առանձին առանձին: Այս յերկար ժամկետ կլսլի և հազիվ թի մոտակա ամիսներում (վորոնց ընթացքում յենթադրում ենք լուծել այս հարցը) այդ գործնականորեն իրագործելի լինի:

Արտադրութիւն մեջ ղեռահասաների քրոնյայի մասին այսպիսի վճիռ ընդունելու կապակցութիւնը, հատուկ նշանակութիւն է ստանում մեր ընդունած մյուս վճիռը, բանվորների յերեխաների, ավագ հասակի ղեռահասաների և պատանիների (переростков) գրավման վերաբերյալ վճիռը: Մինչև այժմ մենք անհրաժեշտ ուշադրութիւն չեյինք նվիրում պատանիների գրավման գործին: Այժմ միութիւն քիջները պետք է այս գործով առանձնապես ղրաղվին: Մեր ընդունած այն վճիռի հաշվին, վոր վերաբերում է ղեռահասաների քրոնյան միայն վորակյալ բանվորական ուժի նկատմամբ հաշվելուն, մենք յենթադրում ենք մոտակայում նշանակալի չափով ավելացնել բանվորների յերեխաների ուղարկումը կամ գրավումն արտադրութիւն մեջ ոժանդակ աշխատանքների համար և այն աշխատանքների համար, վորտեղ վորակում ստանալն ուսման յերկար ժամկետ չի պահանջում: Այս միջոցառութիւնը, հատկապես նրա իրագործման վողջ լրջութիւն պայմաններում, ան-

պայման նպատակ ունի պայքարել դեռահաս բանվոր ավագ հասակի յերեխաների և պատանիների գործազրկութեան դեմ:

**ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ.**

Անցնում եմ բանվոր յերիտասարդութեան աշխատավարձի հարցերին: Ներկա պայմաններում յերիտասարդութեան աշխատավարձի հարցերը բացառիկ կարևոր նշանակութիւն են ստանում մեր միութեան համար: Նախքան աշակերտների հատուկ տարիֆային ցանցի մասին խոսելը, յետևել եմ տալիս ինձ ծանօթացնելու կոնֆերինցիային այն զրուիքի հետ, վոր ներկայումս գոյութիւն ունի դեռահաս բանվորների աշխատավարձի գործում: Յերկրի ժողովրդական տնտեսութեան ընդհանուր աճումը, վոր ստեղծեց նյութական անհրաժեշտ նախազրյալներ բանվոր դասակարգի նյութական մակարդակի լավացման համար, անզրադարձա՛վ նաև բանվոր յերիտասարդութեան նյութական կենսական մակարդակի բարձրացման վրա: Վերջին յերեք տարվա ընթացքում դեռահաս բանվորի աշխատավարձի մեջ հետևյալ փոփոխութիւնները կան.

**ԴԵՌԱՀԱՄԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՇԱՐՃՈՒՄԸ**

Տ Ա Ր Ի Ն Ե Ր	Դեռահասների ամսական միջին աշխատավարձը (առանց ֆարգավուչի)	
	2երվոնուար-իներով	Մինչպատե-րազմյան ուր.
1923/24 թ. . . . .	16,1	7,7
1924/25 թ. . . . .	18,7	8,9
1925/26 թ. . . . .	21,3	9,2

**Արտադրութիւններ**

Դեռահասների միջին աշխատավարձի% (առանց ֆարգավուչի) բոլոր բանվորների միջին աշխատավարձի նկատմամբ

	1923 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.
1. Մանածագործական . . . . .	30,0	53,5	52,7	50,8
2. Փայտի . . . . .	64,0	60,1	56,3	48,6
3. Դիմիական . . . . .	47,1	47,1	40,8	44,2
4. Մննդի . . . . .	51,4	62,4	52,3	43,6
5. Թղթի . . . . .	51,3	48,3	42,4	39,7
6. Կաշվի . . . . .	57,7	58,8	44,7	35,8
7. Հանքային . . . . .	42,2	36,8	40,4	35,2
8. Կարի . . . . .	79,9	61,1	42,8	34,6
9. Մետաղի . . . . .	47,6	37,8	37,3	34,0
10. Պոլիգրաֆիական . . . . .	43,5	44,7	32,3	31,0

Միջինը վողջ արտադրութեան նկատմամբ | 47,1 | 45,8 | 43,4

Ընչպես տեսնում եք, դեռահաս բանվորների աշխատավարձը չէր վոնեցի հաշվով նշանակալի չափով բարձրացիլ և մեզ մոտ: Մենք տեսնում ենք աշխատավարձի նշանակալի բարձրացում նաև մինչպատերազմյան ուուրիներով 1924/25 տարվա համար, բայց 1926 թ. դեռահաս բանվորների աշխատավարձի իրական բարձրացումը մինչպատերազմյան ոուուրիներով նշանակալի չափով պակասել է: Այս բացատրվում է այն բանով, զոր 1925/26 թ. տեղի յեր ունենում սննդի մթերքների և առաջին անհրաժեշտության արդյունքների զների աճում: 1926/27 թ. հավաքական պայմանագրերի վերակնքումը նույնպես ցույց է տալիս յերիտասարդության աշխատավարձի բարձրացում: Այսպես, որինակ, քիմիական արտադրության մեջ դեռահասների աշխատավարձը բարձրացավ 20—30%, մետաղագործության—15—20%, Նույնպիսիսի դրություն գոյություն ունի նաև արտադրության մյուս ձյուղերում:

Մակայն, չնայած աճման այսպիսի ուժգնացման, անհրաժեշտ է դեռ ընդգծել այն հանգամանքը, զոր բանվոր յերիտասարդության աշխատավարձի աճումը, հասակավոր բանվորների միջին աշխատավարձի բարձրացման համեմատությամբ, շարունակ յետ է մնում, զորն անպայման ազդում է դեռահաս բանվորի և հասակավոր բանվորի աշխատավարձի միջին հարաբերականության իրարից նեռանալու վրա: Այս ցույց է տալիս վերը բերած աղյուսակը, զոր վերաբերում է դեռահաս բանվորի աշխատավարձի հարաբերականությանը բանվորների միջին աշխատավարձի նկատմամբ:

Իսկ զորոնք են աշակերտների և հասակավոր բանվորների միջին աշխատավարձի հարաբերականության այս ցածացման պատճառները:

Իրս պատճառն այն է, զոր վերջերս, անսահման չափով զործավարձով աշխատանք մտցնելու կապակցությամբ, տեղի յեր ունենում հասակավոր բանվորների աշխատավարձի բարձրացման արագ պրոցեսսսր, մինչդեռ աշակերտները, հատկապես Ֆարգավուչի դպրոցների աշակերտները, գործավարձով չաշխատելով այնպիսի մեծ քանակով, ինչպես հասակավոր բանվորները, աշխատավարձ էյին ստանում տարիֆային ցանցով: Նույն ուղղությամբ է ազդում նաև այն գրությունը, զոր մինչև այժմ գոյություն ունի տեական թթթու զնումը— ստորին կարգերում դեռահասների հապաղումը, չնայած նույնիսկ այն բանին, զոր նրանք, ստացած վորակման համաձայն, պետք է փոխադրվիյին համապատասխան բարձր կարգերը:

Միմպոտմատիկ է նույնպես Ֆարգավուչի դպրոցների աշակերտների և անհասական քրիզադային աշակերտությամբ սովորող դեռահասների աշխատավարձի հարաբերականության միջև տեղի ունեցող ձեղքը: Դեռահասների աշխատավարձի մեջ յեղած այդ ձեղքը ցույց են տալիս նույնպես և այն տվյալները, զոր մենք հավաքել ենք վերջին 2—3 ասուում: Ահս ինչ են ասում նրանք (1926 թ. մարտի տվյալները) Ֆարքիկա-գործարանային աշակերտության (Ֆարգավուչի) դպրոցների և անհատական-քրիզադային (խմբական) աշակերտության դեռահասների աշխատավարձի հարաբերականության մասին:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	Միջին աշխատավարձը 1926 թ. մարտին		Ֆարգավուչի աշակերտի աշխատավարձի առկա- սային հարաբերությու- նը արտադրության մե- ջի դեռահասի աշխատա- վարձի նկատմամբ
	Ֆարգավու- չի աշակերտ	Արտադրու- թյան մեջի դեռահաս	
1. Հատուկ մեքենաշինություն	21,51	27,19	79,1
2. Տրանսպորտի արտադր. և ու- մանս	19,74	21,55	91,6
3. Մետաղագործություն	17,87	19,40	92,1
4. Բամբակեղենի արտադրութ.	24,19	23,68	102,1
5. Բրդեղենի	21,88	23,13	94,6
6. Վշեղենի	19,95	18,78	106,2
7. Հագուստի արտադր.	24,42	21,26	104,9
8. Կոշիկեղենի	17,07	29,72	57,4
9. Ծխախոտի	22,42	26,53	84,3
10. Ռեսինի	24,83	44,63	55,6
11. ձենապակու և հախճապակու	20,35	20,63	98,6

Դեռահասների աշխատավարձի մեջ յեղած այսպիսի ճեղքը բա-  
ցատրվում է գլխավորապես այն բանով, ինչով վորոշվում է դեռա-  
հասների և հասակավոր բանվորների աշխատավարձի մեջ յեղած սխ-  
տեմատիկ ճեղքը, այսինքն գործավարձով աշխատելով և յերաշխիքա-

ԳՐԲՆԱՎԱՐՁՈՎ ԱՇԽԱՏԱՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՖԱՐԶԱՎՈՒՉԻ ԳՐՈՅՆԵՐՈՒՄ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ	Գործավարձով աշխատողների <sup>0</sup> / <sub>100</sub> ֆարգավուչի աշակերտների մեջ				
	Ուսուց- ման I տա- րի	Ուսուց- ման II տարի	Ուսուց- ման III տարի	Ուսուց- ման IV տարի	Միջի- նը
1. Վշեղեն	25,2	28,2	22,0	25,9	21,5
2. Հատուկ արտադրություն	7,9	12,3	24,5	18,2	12,4
3. Բամբակ. արտադր.	8,1	11,1	14,0	3,8	10,9
4. Բրդեղենի	2,4	9,7	7,9	0,0	6,0
5. Տրանսպորտի արտադր. և ումանս	0,4	2,1	13,3	18,4	3,6
6. Ծխախոտի արտադր	0,0	7,8	7,4	0,0	3,4
7. Մետաղագործություն	0,0	0,2	1,0	8,8	2,1
8. Պոլիգրաֆիական	1,2	2,1	2,7	0,0	2,0

յին կողմնակի աշխատանքների (приработки) տարածումով, Անմիջա-  
կանորեն արտադրության մեջ սովորող դեռահասները գործավարձով  
աշխատում են մանածագործական. արդյունաբերության մեջ 43,5%<sub>00</sub>

քիմիականում—41,7<sup>0</sup>/<sub>0</sub>, մետաղագործականում—31<sup>0</sup>/<sub>0</sub> և այլն: Բոլորովին այլ զրուծյան մեջ և գործավարձով աշխատանքը ֆարգավուչի զբաղրոցների աշակերտների մեջ (եջ 27, 2-րդ աղյուսակ):

Վոր գործավարձով աշխատանքի կիրառման հետևանքը լինում է ղեռահասանների աշխատավարձի բարձրացումը, այդ պերճախոս կերպով հաստատվում է ընտրանքով կատարվող հետազոտութլյունների փաստերով: Այսպես, որինակ, Ալավյանսկ-Դոնեցի յերկաթուղու աշակերտութլյան զպրոցներում գործավարձով աշխատողներն իրենց հիմնական զրույքի վրա վերվաստակ (приработок) ստացան մարտին 18<sup>0</sup>/<sub>0</sub>, մայիսին—19<sup>0</sup>/<sub>0</sub>: Թուրլիներով, միջին հաշվով, այդ առաջին ղեպքում անում էր 5 ա. 22 կ. և յերկրորդ ղեպքում—5 ա. 50 կ.: Նույնպիսի զրուծյուն նկատվում է նաև Դոնեցի յերկաթուղու ֆարգավուչի զբաղրոցում, ուր վերվաստակի<sup>0</sup>/<sub>0</sub> իր հիմնական զրույքի համեմատութլյամբ հավասարվեց 1926 թ. հունվարին 90<sup>0</sup>/<sub>0</sub>, փետրվարին—50<sup>0</sup>/<sub>0</sub>, մարտին—71<sup>0</sup>/<sub>0</sub>, ապրիլին—44<sup>0</sup>/<sub>0</sub> և մայիսին—34<sup>0</sup>/<sub>0</sub>: Այս ավայաները վառ կերպով բնութագրում են գործավարձով աշխատելու աղղեցութլյունն արտադրութլյան մեջ աշխատող և ֆարգավուչի զպրոցներում սովորող աշակերտների աշխատավարձի տարբերութլյունը:

Յեկակետ ունենալով այն, վոր բանվոր յերիտասարդութլյան աշխատավարձի հետագա յետ մնալը հասակավոր բանվորների միջին աշխատավարձից տանում է ղեպի ղեռահաս բանվորների նյութական մակարդակի հարաբերական ցածացումը և վոր նույն այդ պրոցեսը տեղի յե ունենում նաև այն ղեռահաս բանվորների մեջ, վորոնք աշխատում են արտադրութլյան մեջ կամ սովորում ֆարգավուչում,— անհրաժեշտ է մտտակայում հետևյալ միջոցները ձեռք առնել, ձգտելով տարածել յերիտասարդութլյան վրա արհմիութլյունների VII համագումարի բոլոր վորոշումներն աշխատավարձի կարգավորման մասին.

1 ՀԱՄԳԻՊ ղծով ղործնական ցուցումներ մշակել աշակերտների ու ղեռահասների գործավարձով աշխատանքի թույլտվութլյան լայնացման մասին, ընդ վորում հաշվառելով գործավարձով աշխատանքի զուգորդութլյան անհրաժեշտութլյունը նորմալ վորակում ունենալու հետ.

2. ուժեղացնել և արհմիութլյունների միջոցով էլ ավելի վճռականորեն պայքար մղել ուսուցման ամբողջ պրոցեսսն այլանդակող աննորմալութլյունների ղեմ, ինչպես, որինակ՝ աշակերտների ցածր կարգերում պահելու ղեմ, յերբ փաստապես աճել է նրանց վորակումը և նրանք կատարում են բարձր կարգով տարիֆի յենթարկված աշխատանք, աշակերտների բարձր կարգերն առաջանալու սահմանափակման ղեմ և այլն:

ՀԱՏՈՒԿ ՏԱՐԻՓԱՅԻՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՄԱՍԻՆ.

Ընկերներ, յես ելի միքանի նկատողություններ պետք ե անեա աշակերտների հատուկ տարիֆային ցանցի մասին: Ինչո՞ւ բարձրացա՞վ աշակերտների տարիֆային ցանցի ամբողջ վեճը: Այդ վեճն ամբողջովին բղխում ե նրանից, վոր հիմնական տարիֆային դրույքը, անասմանափակ գործավարձով աշխատանք մտցնելու ե տարիֆային դրույքին յերաշխիքային վերվաստակ (приработок) կցելու հետևանքով, իր նշանակութունը կորցրեց: Արհմիություններն այժմ արտահայտվեցին այն բանի ոգտին, վորպեսզի առաջին կարգերի բանվորներէ հետ մնացած կատեգորիաները մոտեցնեն բարձրերին: Այս հարցն անպայման շոշափեց նաև բանվոր յերիտասարդության աշխատավարձը: Մենք արդեն ունենք ՀԱՄԿԻՄ վորոշումը աշակերտների հատուկ տարիֆային ցանց մտցնելու անհրաժեշտության մասին: Մեր միության կենտկոմը մինչև այժմ դեռ չի հայտնել իր կարծիքն այս հարցի մասին: Մենք չե՞յինք կարող մեր կարծիքը հայտնել, վորովհետև մինչև այժմ մենք չգիտենք, թե ինչ ե լինելու հատուկ տարիֆային ցանցը, ինչի յհ հասցնելու, արդո՞ք աշխատավարձի ցածացման, թե նրա բարձրացման ե ինչպիսի բարձրացման: Ձեր քննությանը ներկայացրած բանաձևում մենք, գլխավորապես, մատնանշում ենք այն բանի վրա, վորպեսզի դեռահաս բանվորների աշխատավարձի սխտեմի հարցը մշտկելիս պարտադրաբար հաշվի առնվի այն, վոր անհրաժեշտ ե դեռահաս բանվորների աշխատավարձը 4—6-ժամյա բանվորական որվա համար պահել իբրև 8-ժամյա բանվորական որվա աշխատավարձ:

Այս մասին վերապահություն անելով, մենք պետք ե ձգտենք այն բանին, վոր տվյալ հարցի լուծման ժամանակ պարտադրաբար պահվի դեռահաս բանվորների գոյություն ունեցող իրական աշխատավարձը ե յերաշխիք ստեղծվի ապագայում նրա բարձրացման համար բոլոր բանվորների աշխատավարձի բարձրացման համապատասխան: Սակայն դժվար ե հավատար, վոր այս ամենը մենք կարող ենք պաշտպանել հատուկ աշակերտական տարիֆային ցանց մտցնելու գեպու՞ւմ: Շոս օժժոր ե հավասար: Ընկերներ, անա ինչու մինչև այժմ մենք դեռ չենք արտահայտվել հատուկ աշակերտական տարիֆային ցանցի ոգտին, վորի մտցնելը վճռել ե ՀԱՄԿԻՄ: Ինչի՞ կարող ե հասցնել աշակերտների հատուկ տարիֆային ցանցը.— նա կարող ե հասցնել այն բանին, վոր դեռահասների աշխատանքի վարձատրության գոյություն ունեցող սխտեմը քանդվի, աշակերտական ցանցը կարող ե հասցնել այն բանին, վոր հետագայում ուժեղանա դեռահաս բանվորների միջին աշխատավարձի տարբերությունը հասակավոր բանվորների միջին աշխատավարձի նկատմամբ:



Այս ել հարկադրում ե մեզ բաղձակողմանի կերպով քննել տվալ զուրջ հարցը: Կարելի՞ յե արդյոք կառավարվել առանց հատուկ տարիֆային ցանցի (Նոսմեզնեկովը տեղից.— Զի կարելի): Ընկեր Նոսմեզնեկովը, ցանցի սկզբունքային էյուլթյունը չպարզելով, առում ե, վոր չի կարելի Նա մի հողված գրեց, վորի մեջ վոչ միայն փորձեց մեղադրել կոմյերիտիությանը, այլև ամբողջովին սեղադրեց այն բանի համար, թե իբր մենք այնքան կարճատես ենք յեղել, վոր մի շարք տարիների ընթացքում չենք տեսել արդեն գոյություն ունեցած աշակերտական հատուկ տարիֆային ցանցը: Նա այս բանում մեղադրում եր միությանը և, աշխատավարձի կարգավորումից առանձին մոմենտներ բերելով, կարծեք թե, իհաստատություն իր ճշտության, մոռանում եր, սակայն, այն բանը, վոր այդ բոլորը տեղի յեր ունենում առանձին, բոլորովին այլ պայմաններում, ժամանակի տարբեր պարագաներում, վորը ստեղծված էյին հաշվառել և՛ արհմիությունները, և՛ կոմյերիտիությունը: (Մեկը տեղից.— Իսկ առաջ ի՞նչ եր գրում նա): Առաջ, նույնիսկ մի ամիս սրանից առաջ նա կովում եր ցանցի դեմ: Ահա այսպես, կարելի յե արդյոք կառավարվել առանց աշակերտական հատուկ տարիֆային ցանցի: Յեթև չի կարելի կառավարվել արդյունաբերության բոլոր ճյուղերում, ապա առանց դրա գոնե մի շարք խոշորագույն արտադրությունների մեջ կարելի յե կառավարվել: Յեթև մենք ուշադրության առնենք այն, վոր քիմիական արդյունաբերության մեջ զեռահասաների 41% գործավարձով ե աշխատում, իսկ մանածագործականում—մինչև 43—45%, ապա այդ դրությունն ընդգծում ե, վոր անպայման հարկավոր չե արդյունաբերության այդ ճյուղերի աշակերտներին զատել և ստեղծել հատուկ աշակերտական տարիֆային ցանց: Բայց սրա կողքին հարկավոր ե ընդունել և այն սկզբունքը, վոր արտադրության առանձին ճյուղերում մենք չենք կարող կառավարվել առանց հատուկ տարիֆային ցանցի կամ աշակերտների աշխատանքի վարձատրության վորևե այլ փոփոխված սխտեմի: Կարելի յե, որինակ, առանց աշակերտական ցանցի կառավարվել այսպես.—զեռահաս բանվորների համար ուսման առաջին տարում առաջին կարգով աշխատավարձ սահմանել վոչ ամբողջ 100%, այլ 75%, կարելի յե գտնել և ուրիշ նման միջոցներ, թողնելով աշակերտներին բանվորների և ծառայողների ընդհանուր տարիֆային ցանցում: Յեով այս այն պատճառով, վորպեսզի պահենք բանվոր յերիտասարդության աշխատավարձի հետագա բարձրացման յերաշխիքը բանվորների աշխատավարձի բարձրացման համապատասխան, այն պատճառով, վորպեսզի պահենք, զեռահասի վորակման համապատասխան, նրան յուրաժամանակ այս կամ այն բարձր կարգը փոխադրելը: Սրանք են ընդհանուր գծերով այն խնդիրները, վոր

զրված են միութեան առջ զեռահաս բանվորների աշխատավարձի կարգավորման սխտեմի փոփոխման գործում:

ՀԱՄ. ԼԿՅԵՄ ՅԵՎ. ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՍԻ ԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՑԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Վորովհետև զեկուցման համար ինձ մնում են խիստ սահմանափակ թվով բոլորներ, յես կանգ չեմ առնի բանաձևում զրված միշտ բայլ հարցերի վրա, կանցնեմ վերջին ու չափազանց կարևոր հարցի լուսարանութեանը— յերիտասարդութեան մասնակցութեանն, արտազրական կյանքին:

Յերկրի ինդուստրացման իրականացումն անհնար է առանց մաքսիմալ խնայողութեան և առանց խստագույն խնայողական ուժի մի: Իրրև սոցիալիստական կուտակման և կուտակված միջոցների ռացիոնալ ծախսման անհրաժեշտ միջոց նոր արդյունաբերական ձեռնարկութեաների վերասարքավորման և շինարարութեան համար, ինդուստրացումը կոմյերիտմիութեանից պահանջում է իսկական ակտիվ մասնակցութեան ամբողջ արտազրական պրոցեսին: Այն բանից հետո, յերբ միութեան կենտրոնական կոմիտեն շրջաբերական ուղարկեց խնայողութեան ուժի մի իրադրմանը կոմյերիտմիութեան մասնակցութեան մասին, մենք մի ամբողջ շարք կոմյերիտական արտադրական ընթացքներում արմատական բեկումն ենք տեսնում այս ուղղութեամբ, ամենորայ արտազրական կյանքին յերիտասարդութեան գործնական մասնակցութեան ուղղութեամբ: Մենք ունենք վոչ միայն ստեղծված բեկում, այլև նշանակալի նվաճում, ինչպես վոր, իհարկե, կան աշխատանքում նաև ամենալուրջ, մինչև այժմ չվերացված թերութեաններ: Աշխատանքից բացակայելու դեմ մղվող պայքարում մենք մի ամբողջ շարք փաստեր ունենք հավաքած կոմյերիտական մամուլում, վորոնք ասում են, թե աշխատանքից բացակայելը կրճատվում է: Ահա ինչ է հաղորդում մեզ «Կոմսոմոլսկայա Պրավդան».— «Ենզելսի անվան գործարանում յերիտասարդութեան աշխատանքից բացակայելը նշակալի չափով նվազել է.— մեք ենաշինարարական բաժնում, որինակ, 90%: Յերիտասարդների մեջ աշխատանքից բացակայողների տոկոսը նշանակալի չափով ցած է, քան հասակավոր բանվորների մեջ, կոմյերիտականները հասան ախ բանին, վոր զանազան նյութերի ստպոնի, կավճի և այլն տալը կատարվում է վոչ թե առանձին պահանջներով, այլ ցուցակներով: Այս նշանակալի չափով անտեսում է բանվորների ժամանակը: Կամ— «Իրկուտսկ քաղաքում յեռանդողին կամպանիայի շտրեհով, յերիտասարդութեան աշխատանքից բացակայելու դեպքերի թիվը կարող է կերպով պակասեց: Վորոչ ձեռնարկութեաններում աշ-

խատանքից բացակայելը բոլորովին արժատախել և յեղել: Մյուսմեք-  
բում յեղակի դեպքեր են նկատվում, Առաջներն աշխատանքից բա-  
ցակայելը հասնում էր 6-ից մինչև 10%<sub>0</sub>: Իրկուսակի բոլոր ձեռնարկու-  
թյունների համար որինակ և հանդիսանում կենտրոնական եկեղաբա-  
կայարանը: Ամբողջ տարվա ընթացքում յերիտասարդութունը վաշ-  
մի անգամ աշխատանքից չի բացակայել: Սրա շնորհիվ կոմյերիտական  
բջիջի հեղինակութունը նշանակալի չափով աճեց անկուսակցական  
բանվորների մեջ: Վոր աշխատանքից բացակայելու դեմ մղած անո-  
ղոք պայքարը խոշոր նվաճումների հասցրեց մեզ, այդ ասում են աշ-  
խատանքից բացակայելու մասին առանձին բջիջների հավաքած թվերը:

Վ. Ի. Լենինի անվան գործարան-դպրոցի հետադոտության նյու-  
թերից, վորոնք վերաբերում էին խնայողության սեփմի իրագործ-  
մանը, պարզվեց, վոր աշխատանքից բացակայելու %<sub>0</sub>-ը կտրուկ կեր-  
պով պակասել է:

ՅԵՐԻՏԱՍԱՐԳԻՌԻԹՅԱՆ ԱՌԱՆՑ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏԱՌՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ  
ԲԱՅԱԿԱՑԵԼՈՒ ՈՐԵՐԻ ՔԱՆԱԿ

Փետրվարին . . . . .	330	աշակերտին ընկնում է	419	որ
Ոգոստոսին . . . . .	287	»	»	92
Սեպտեմբերին . . . . .	361	»	»	288
Հոկտեմբերի կեսին . . . . .	363	»	»	100

Աշխատանքի գալը կարգավորված է: Լավ ուղղությամբ է փոխ-  
վել նաև բանվոր յերիտասարդության վերաբերմունքը դեպի արտա-  
դրությունը:

Աշխատանքից բացակայելը պակասել է նույնպես և «կարմիր  
Հոկտեմբեր» գործարանում:

Հունվարին 1,500 բան յերիտ. . . . .	ընկնում է	851,75	որ
Փետրվարին . . . . .	»	»	523,25
Մայիսին . . . . .	»	»	623
Հունիսին . . . . .	»	»	399,50

Այս թվական նյութերը, վոր խոսում են աշխատանքից բացա-  
կայելու տոկոսի նվազման մասին, մի ավելորդ անգամ ընդգծում են:  
վոր բջիջները համապատասխան գործնական աշխատանքն իր գրու-  
թյան բարձրության վրա յե յեղել:

Սրա կողքին մենք նկատում ենք նաև մեր միության աշխա-  
տանքի նշանակալի լավացում արտադրական կյանքում: Այդ մասնա-  
կցութունը հանգում է այն բանին, վոր առանձին կոմյերիտական  
բջիջներ իրենց շարքերում ավելի ակտիվ կոմյերիտականներ ու յերի-  
տասարդ բանվորներ ունենալով, գործնականորեն զնում էին արտա-  
դրական խորհրդակցությունների առաջ այս կամ այն, առաջին ան-

զամ մանր թվացող, բայց իրոք խոշոր հարցերի լուծումը, վորոնց ընդունելուց և գործնականապես կենսագործելուց հետո մեծ խնայողութուն եր ստացվում և բարձրանում եր աշխատանքի արտադրողականութունը: Այս հաստատելու համար բերենք հետևյալ յերեք փաստը՝

«1. «Կարմիր Արշարույս» տրեկոտածի գործարանի (Մոսկվա) ֆլանզի բաժանմունքը վերջերս ապրում եր ծանր մոմհետ, չկային ողակներ՝ ֆլանզի մեքենաների մեխանիզմի չափազանց նուրբ և փրկարուն մասերը:

Նորը պատրաստելու համար առասպելական գներ պահանջեցին: Ողակները դուրս գրվեցին արտասահմանից: Մինչև նրանց ստացվելը ամբողջ գործարանը զարմացրեց կոմյերիտական Ֆոմիչևը, վոր վերջերս եր աշակերտութունը ավարտել: Նա ինքնուրույն կերպով շինեց այդ ողակներից հինգ հատ, վորով դժվարութունից հանեց համբարութունը, հնարավորութուն տալով, վոր մեքենաներն առանց կանգ առնելու աշխատեն: Գործարանային արտադրական աշխատանքի մեջ քաշված և համարյա ամբողջ կոմյերիտական յերիտասարդութունը: Տնտեսական հանձնաժողովի նիստերում ներկաները յերեք 30—35 հոգուց պակաս չեն լինում»:

«2. «Կարմիր Հոկտեմբեր» գործարանի (Մոսկվա) կոմյերիտականներն ունեն իրենց արտադրական վաստակները: Կոմյերիտական Մյասնիկովի անունը հիշում են գործարկումում: Նա յե հարուցում դազգայհների վերասարքավորման և նորերը դնելու հարցը, ասում և վարպետին, իսկ նրա միջոցով հարց և հարուցում նաև արտադրական խորհրդակցության մեջ: Բիսկվիտի բաժանմունքում վերանորոգվում եր մեքենան, վորի համարյա բոլոր մասերը յերկար ժամանակ ցրված էյին բաժանմունքում: Կոմյերիտականներն այս հարցը հարուցեցին փրեկտորի և վարպետների առաջ, և հետևանքն այն յեղավ, վոր մեքենան պատրաստվեց ու բանի գցվեց»:

«3. (Սարատով)—տրամվայի պարկի յերեք կոմյերիտական՝ Ը. Ը. Վասիլյևը, Ռանցևը և Կոնոնենկոն արտադրողականութունը մեծացնող և արտադրութունը եժանացնող մի շարք կատարելագործութուններ արեցին: Վասիլյևն առաջարկեց տրամվայի պարկի ուղքների մեխանիկական փոխադրության նախագիծ: Նա հնարեց նաև շարժումը կարգավորող ելեկտրական զանգ: Իր բոլոր գյուտերի համար Վասիլյևն ոգտագործել և մետաղի զանազան թափթվուկները:

Ռանցևն առաջարկ մտցրեց վերանորոգման աշխատանքների ուցիտնալացման մասին: Այժմ նրան առաջ են քաշել տրամվայի դեպոյի բրիգադիլի ոգնականի պաշտոնի համար: Այս առաջին դեպքն է, յերբ յերիտասարդ բանվորին առաջ են քաշում մի պաշտոնի համար, վոր առաջ գրավում էյին վորակյալ հին բանվորները:

Կոնոնենկոն մի կատարելագործութիւն մտցրեց, վորի շնորհիվ սելսերը սղոցում են վոչ թի յերեք, այլ յերկու բանվոր»:

Յերիտասարգ գլուտարարներն աշխատում են նոր կատարելագործութիւնները նախագծերի վրա:

Լավ աշխատանքի համար վոչ միայն պատիվ, այլև առաջընթաց:

(Մոսկվա—Մոսկվոչվեյ) գործարան): «Գործարանում աշխատող յերիտասարգութիւնը բացառապէս կազմված է նախկին ֆաբրիկայատաներից, վորոնք աշխատանքում յետ չեն ֆնում վորակյալ բանվորներից և նույնիսկ վորոշ զեպքերում գերազանցում էին նրանց: Գործարանային կազմակերպութիւնը ջանում է ավելի ընդունակ դեռահասներին հնարավորութիւն տալ իրենց վորակումը բարձրացնելու: Որինակ՝ գործարանում աշխատում եր ընկ. Ֆրոյովը: Գործառնաճային կազմակերպութիւնը հաշի առնելով Քրոյովի լավ վերաբերմունքը զեպի արագութիւնը, վարձեցին նրան նշանակել գործառնաճի բաժանմունքներից մեկի հրահանգի»:

Իսկ ի՞նչ հիմնական թերութիւններ կան յերիտասարգութիւն արտադրական կյանքին մասնակցելու մեջ: Մինչև այժմ միութիւն յեկավար մարմինները չէին զեկավարում բլիջները աշխատանքն այդ ուղղութիւնում:

Բանաձևերն ընդհանուր բնույթ էին կրում, լի ընդհանուր դատողութիւններով, մինչդեռ արտադրական կյանքին յերիտասարգութիւն մասնակցութիւնը զարգացնելու վերաբերյալ առանձին կազմակերպութիւնների փորձը չէր ոգտագործվում և չէր փոխադրվում այլ կազմակերպութիւններ: Այս առաջին: Յերկրորդ՝ հարկավոր է դեռ ընդունել այն չափազանց լուրջ թերութիւնը, վոր արմիութիւնները և տնտեսական մարմինները յերիտասարգութիւն ուղղութիւնը չափազանց քիչ են գրավել արտադրութիւն լավացման ու ռացիոնալացման վրա: Ի՞նչ է անհրաժեշտ այժմ միութիւնը կոնկրետ կերպով առաջադրել: Ի՞նչ խնդիրներ են զձագրվում մեր առջ յերիտասարգութիւն աշխատանքից բացակայելու, զեպի արտադրութիւն անհոգ վերաբերվելու դեմ մղվող հետագա կռիւում և այլն: Մենք պետք է յերկու խնդիր դնենք, նախ՝ ուղղութիւնը կենտրոնացած պահելով բանվոր յերիտասարգութիւն մի մասի աշխատանքից բացակայելու և պարագ թրև գալու դեմ մղվող անխնա պայքարի վրա, հարկավոր է ոգտագործել բանվոր յերիտասարգութիւն արտադրական-դասակարգային դաստիարակութիւնը գործնական հողի վրա դնելու ամբողջ կուտակված փորձը. յերկրորդ՝ յերիտասարգութիւն արտադրական կյանքին մասնակցելու գործում մենք պետք է լուրջ կերպով առաջադրենք մեզ արտադրական խորհրդակցութիւնների աշխատանքի լավացման խնդիրը:

ՀԱՄ.ԼԿՅԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ.

Կոմյերիտմիութեան աշխատանքն արտադրական խորհրդակցու-  
թյուններում, վորոնք հանդիսանում են բանվորական լայն մասսա-  
ներին խորհրդային տնտեսութեան գործնական շինարարութեան գործի  
մեջ քաշելու և նրանց մեջ այն գիտակցութեանը դաստիարակելու լա-  
վագոյն ձևը, թե աշխատավորների շահերը սերտորեն կախված են  
սոցիալիստական պետութեան տնտեսական հաջողութեանների աստի-  
ճանից... (XIV կուսնամագուժարի բանաձևից), պետք է յերիտասար-  
գութեան մասսաների արտադրական-դասակարգային դաստիարակու-  
թեան հիմնական կենտրոնը լինի և նրան արտադրական կյանքին մաս-  
նակցութեան գրավելու հիմնական ձևը: Անցած շրջանը, չնայած մաս-  
նակցութեան ասպարիզում կատարած մի շարք նվաճումներին, բնու-  
թեամբովում և միութեան հարմարումով արտադրական խորհրդակցու-  
թյունների, հանձնաժողովների, կոնֆերենցիաների և այլն աշխա-  
տանքին:

**Դճեպրոպետուսի:** «Կոմյերիտականների գործնական առաջարկ-  
ները հիանալի արդյունքներ են ունենում արտադրական խորհրդա-  
կցութեաններում: Պետրովսկու անվան գործարանի դոմենի բաժան-  
մունքում կոմյերիտականների առաջարկով սպասարկող պերսոնալից  
կըճատվեցին 2 մարդ: Կոմյերիտականների պնդումներին շնորհիվ յու-  
րաժամանակ մատակարարվում է աղյուս և կալ ու կըճատված են բան-  
վորների պարապուրդները:

Նույն գործարանի Մարտինովսկու բաժանմունքում փայտի պա-  
կասութեան պատճառով վառում էյին նոր տախտակները: Կոմյերիտա-  
կանները հասան այն բանին, վոր փայտը ճշտապահութեամբ մատա-  
կարարվի: Կրակի դիմացող (огнеупорный) բաժանմունքում, դարձյալ  
կոմյերիտականների նախաձեռնութեամբ, ապակիներ են զգված և կըր-  
ճատված են ելեկտրական լուսավորութեան ծախքերը: Բակի բաժան-  
մունքում կոմյերիտականներն առաջարկեցին կըճատել կոմմունալ ծա-  
ռայութեանները, վորից տարեկան 3,500 ռ. խնայողութեան ստացվեց:  
Նույն այդ բաժանմունքում, կոմյերիտականների պնդումով, դատի  
հանձնվեց կապալառուն, վոր թանգ գնով 20,000 փութ վատ խոտ եր  
գնել:

**Մոսկվա, «Դիմալո» գործարան:** «Մեզ մոտ «Դինամո» գործա-  
րանում հասակավոր բանվորները և յերիտասարգութեանը շատ հա-  
մակրանքով վերաբերվեցին արտադրական խորհրդակցութեանների  
կազմակերպմանը: Սկզբում արտադրական խորհրդակցութեանները  
լավ էյին աշխատում, նրան մասնակցում էյին համարյա բոլոր վո-

րակյալ բանվորները: Յերկու յերիտասարդ բանվոր, ը. ը. Մարտի-նովն ու Սյասինը առաջարկ մտցրին ավտոմատ դազդյահի կատարելադործության մասին: Երանց առաջարկները կենսագործեցին, և հեղույաները (բոլտերը) կարող պլաշկան այժմ  $2\frac{1}{2}$  անգամ ավելի յե դիմանում, քան առաջ: Յերիտասարդությունը մտցրեց մի շարք ուրիշ առաջարկներ ևլ արտադրության լավացման վերաբերյալ: Վերցնենք թեկուզ սեռաստաների դիմադրության տարրերի համար եժման ներկ գործածելու առաջարկը, վորից 400 ո. խնայողություն ստացվեց:

Սակայն, չնայած այս նվաճումներին, յերիտասարդության և Համ. ԼԿՅԵՄ արտադրական խորհրդակցություններին մասնակցելու հարցի մասին իր ամբողջությամբ պետք և այն յեղրակացությունն անենք, վոր այս ասպարիզում աշխատանքը բավական չեր, և վոր նա դեռ յերբեք ևլ չի մտել միության ամենորյա գործունեյության սխաեմիմեջ: Հատուկ ուշադրություն են հրավիրում իրենց վրա այնպիսի պատճառներ, ինչպես այն, վոր յերիտասարդության աշխատանքի հարցերը չափազանց քիչ են զրվում արտադրական խորհրդակցությունների նստությանը, խորհրդակցության վճիռները չեն կատարվում և այլն, ու սրանք բացասաբար են ազդում արտադրական խորհրդակցություններին յերիտասարդության մասնակցության վրա: Իսկ թուլության դիւսավոր պատճառը մեր անշնորհքությունն և: Իսկ վորո՞նք են աշխատանքի թերությունները: Դրված հարցի ցուցադրական պատասխանը կարող են լինել հետեյալ փաստերը.

«Մուրճ և Մանգաղ» գործարանում աշխատում են ավելի քան 1,000 յերիտասարդ, նրանցից 565 կոմյերիտական: Բջիջը մոտ 20 կոմյերիտականի ընտրել և բաժանմունքների և համագործաբանային արտադրական խորհրդակցություններում աշխատելու համար: Ընտրեցին ու զբանով ևլ դափնիներ շահեցին: Ծանրաբեռնումը հաշվում եյին նրանց վրա, իսկ վոչ մի աշխատանք չեր կատարվում: Կոմյերիտականի քիչ կտեսնես խորհրդակցություններում, յերբեմն կմտնեն 2—3 հոգի, կնստեն 15—20 րոպե ու հնչյե, իսկ գործնական յելույթներին մասնակցում են միայն 20, այն ևլ ձևականորեն: Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմի նամակը խանգարեց բջիջի հանգիստը նաև այս հարցում: Միանգամից ակտիվը կենդանացավ: Կարձեք թե ցնցվեցին: Ակտիվի ժողովում զրվեց գործարանի դիրեկտորի զեկուցումը խնայողության ուեմի մասին, վորը ծանոթացրեց ակտիվին խնայողության համար մղվող պայքարի խնդիրներին ու նպատակին, և կոմյերիտմիության մասնակցությունն այդ պայքարին: Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմի նամակը կարգացին բոլոր բջիջներում: Վիճաբանություններին վոչվոք չմասնակցեց, բարձրագոչ բանաձև ընդունեցին, և զբանով վերջացավ գործնական աշխատանքը: Վերջացած և ամեն ինչ:

Այս—պաշտօնական բարորությունն է:

«Կարմիր Էբրոս» գործարանում աշխատում են մոտ 850 յերիտասարդ: Կոմյերիտականներն ամրացված են 9 բաժանմունքի, նույնպես և համագործարանային արտադրական խորհրդակցութայնը: Նրանցից միայն մեկ կոմյերիտական աշխատում է գրտնակի (ВАЛЬЦОВОЧНЫЙ) բաժանմունքում, մնացածները միայն ցուցակներում գոյութուն ունեն: Իսկ խորհրդակցութուններն այցելում եր կոմյերիտականների խիստ փոքր տոկոսը: Կա նույնիսկ զուտ-անտարբեր վերաբերմունք: Ա՛ 5 բաժանմունքի ԲՂԻՂՈՒՄ Կենտկոմի նամակը կարդալուց հետո հանդես յեկան մի յերկու հոգի, վորոնք խոսեցին յերկրի ինդուստրացման և խնայողութայն համար մղվող կովի անհրաժեշտութայն մասին: Խսկ Կոնկրետ կերպով վոչվո՛ւ չմասճագեց ի՛ր բաժանմունքի քերութունքերի վրա, չնայած թերությունները շատ են, իվերջս այսպիսի բանաձև ընդունեցին: «Քննութայն առնելով ՀամԿԵՅՄ Կենտկոմի նամակը, անհրաժեշտ համարել հաշվառել արտադրական խորհրդակցությունների մեծ ոգուտը և խնայողութայն համար մղվող պայքարի մեջ զբաղել բոլոր կոմյերիտականներին և անկուսակցական յերիտասարդությունը»:

«Գեղեցիկ» բանաձև, բայց գործ անելու մասին վոչինչ չնշեցին:

Այսպիսով, յերիտասարդութայն արտադրական խորհրդակցություններին մասնակցելու մասին բերած փաստերն ամենևին ել դեռ չեն արտացոլում յերիտասարդութայն արտադրական կյանքին ունենալիք անհրաժեշտ մասնակցությունը, վոր մենք պետք է ունենանք: Մենք իրոք այնպիսի դրություն ունենք, վոր առանձին յերիտասարդ բանվորներ այսօր մասնակցում են արտադրական խորհրդակցություններին, իսկ վորոշ ժամանակ անց՝ չեն հաճախում կամ գալիս են կես ժամով, հինգ րոպեով, իսկ հետո հեռանում: Այս բոլոր փաստերը և որինակները մի ավելորդ անգամ ընդգծում են այն, վոր յերիտասարդութայն մասնակցությունը արտադրական խորհրդակցություններին թույլ է:

Իսկ ի՛նչ խնդիրներ պետք է առաջ քաշենք մենք արտադրական խորհրդակցություններում միութայն աշխատանքը լավացնելու գործում: Նախ՝ անհրաժեշտ է գոյութուն ունեցող թերությունը վերացնելու նպատակով, վոր հանգում է բանվոր յերիտասարդութայն աշխատանքի ու կրթութայն հարցերը թույլ դնելուն, արտադրական խորհրդակցութայն մեջ արհմիությունների ուշադրությունը հրավիրել յերիտասարդությունն արտադրական կյանքի մեջ զբաղելու գործի վրա: Մենք պետք է նախորոք պատրաստվենք, կոմյերիտմիութայն ԲՂԻՂՈՒՄ բաղմակողմանի մշակենք արտադրական խորհրդակցությունների քըննութայնը զբվող հարցերը, մտցնենք այդ հարցերը նրանց գործունե



յության պլանը: Յերկրորդ՝ յերիտասարդության նախաձեռնությունը խորխուսելու նպատակով մենք պետք է ավելի լուրջ դրադվենք այսպիսի հարցերի լուծումով, ինչպիսին, որինակ, արտադրական խորհրդակցություններին կից ժամանակավոր հանձնաժողովների և միության ղեկավարությամբ յերիտասարդության զանազան տեսակի կամավոր միավորների կազմակերպումն է: Մենք դեմ ենք այն բանին, վորպեսզի արտադրական խորհրդակցություններին կից կազմակերպվեն յերիտասարդության զանազան խմբակներ: Այդ զուգահեռություն (պարալլելիզմ) կլինի, բայց մենք կողմնակից ենք այն բանին, վորպեսզի արտադրական խորհրդակցություններին կից ստեղծվեն ժամանակավոր հանձնաժողովներ, վորոնց խնդիրը լիներ բանվոր յերիտասարդության աշխատանքին ու կրթությանը վերաբերող առանձին հարցերի նախորոք մշակումը: Այդ հանձնաժողովները նշանակալի նախով կնպաստեն արտադրական խորհրդակցություններում միության աշխատանքի լավացման գործին:

ՊԵՏԻ ԵՆ, ԹԵ՝ ՊԵՏԻ ԶԵՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՄՐՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ինչպես յերևում է, միության ստեղծագործական աշխատանքի անցյալ շրջանում, չնայած աշխատանքի թերություններին, կոմյունիստիկության բջիջներն, այնուամենայնիվ, նշանակալի նախով մտտեցան արտադրական կյանքի մասնակցությանը: Բանվոր յերիտասարդության մասսաներում տեղի յե ունենում մեր սոցիալիստական ձեռնարկությունների սոցիալիստական եյության զիտակցման պրոցեսը, պակասում է աշխատանքից բացակայելու տոկոսը, և թուլանում է յերիտասարդության անհոգ վերաբերմունքը դեպի արտադրությունը: Յերիտասարդության թեթևամիտ վերաբերմունքը դեպի արտադրությունը՝ այսպիսի հայտարարություններով— «Ինձ համար միևնույն է», կամ «առանց մեզ կանեն», որ որի վրա ավելի ու ավելի վերանում է: Աճում է աշխատանքի արտադրողականությունը, լավանում է պրոդուկցիայի վորակը և բարձրանում է աշխատանքի կարգապահությունը:

Սրա կողքին տեղի յե ունենում նաև մեր միության աշխատանքի լավացման պրոցեսը: Կոմյունիստիկության բջիջներն իրենց անդամների անձնական որինակով և իրենց աշխատանքի ձեռքը յերիտասարդության առանձին խմբակների կարիքներին ու առանձնահատկություններին հարմարեցնելով, դառնում են բանվոր յերիտասարդության մասսաների իսկական կազմակերպողները՝ նրան տեխնիկայի լավացման պրոցեսին և արտադրության կազմակերպմանը ակտիվ մասնակցության գրավելու գործում: Արտադրական դաստիարակու-

թյան տարրեր ունեցող կուլտուրական աշխատանքի ծավալման պրոցեսը և աշխատանքի այնպիսի ձևերի կիրառումը, ինչպես՝ աշխատանքից բացակայողներին դատելը, լավագույն արտադրական աշխատողի մրցություն հայտարարելը, տեխնիկայի յերեկույթների, արտադրական դասախոսությունների կազմակերպումը և այլն,— պե՛տ է չամ. ԼՎՅԵՄ ամե՛ն մի բը՛ջի սեփականությունը դառնանք:

Սակայն, ընդամին հարկավոր և ընդգծել, վոր հատուկ անհրաժեշտությունն է վոչ միայն անցկացվող միջոցառությունները լավացնել, այլև՛, գլխավորապես, ձեռք բերած արդյունքներն ամրացնել: Մենք հաճախ, շատ հաճախ այնպիսի փաստերի յենք հանդիպում, յերբ մեր կոմյերիտականները և յերիտմիության բջիջները ձեռք են դարկում այս կամ այն նոր գործին և նրա իրագործման կես ճանապարհին իրենց վողկերությունը թուլացնում. լինում է, վոր բոլորովին հրաժարվում են իրենց սկսած գործից: Սրա դեմ պետք է վճռականորեն պայքարել, վորովհետև այդպիսի խաղերը բանվոր յերիտասարդության մասայում թերահավատություն են արմատացնում աշխատանքի հաջողության նկատմամբ: Նրանք հասցնում են այն բանին, վոր յերիտասարդության ու հասակավոր բանվորների մեջ կասկած է ծագում անցկացվող միջոցառությունների մասին:

Մենք այս բանն ակնառու դիտում ենք թեկուզ այնպիսի որինակի վրա, ինչպիսին են այժմ տեղի ունեցող վեճերը՝ արդյոք պէտք է, թե՛ պետք է մրցություններ կազմակերպել լավագույն արտադրական աշխատողի համար: Մրցությունները, յեթե նրանց իրագործման վրա բազմակողմանի խորհնք և լավագույն նախապատրաստական աշխատանք կատարենք, վոչ միայն աշխատանքից բացակայելու և դեպի արտադրությունն անհող վերաբերվելու դեմ մղվող պայքարի ամենալուրջ միջոցներից մեկն են, այլ և լայն բանվորական մասսաների արտադրական-դասակարգային դաստիարակության միջոցներից մեկը:

Չնայած լավագույն յերիտասարդ բանվորի կոչման համար կազմակերպած մրցությունների այսպիսի մեծ նշանակության, նրանց թույլ նախապատրաստության և ձեռք բերած արդյունքների ամբացման անկարողության հետևանքով, նրանց անհրաժեշտությունը լայն քննության յենթարկվեց արհմիութենական մամուլի հջրում: Ահա ինչ են գրում բանիթակիրները մրցությունների պետք չլինելու մասին «Голос Текстилей» թերթում. «Մեզ մոտ (Տվերում) մրցություններով խիստ զրավվում են: Այս որերս վերջացավ լավագույն ջուլհակի մրցությունը, իսկ այժմ տեղի յե ունենում լավագույն մանողի մրցությունը: Մրցության ժամանակ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ, աշխատանքից բացակայելը քչացավ,

պրոդուկցիայի վորակը լավացավ: Այս բոլորը ճիշտ է: Բայց մրցության հետևյալ որն այս բոլոր նվաճումները իչիք դարձան: Այս բացատրվում է նրանով, վոր մրցությունը սաստիկ ուժասպառել եր բանվորներին»:

Այս վորոշումը, իհարկե, ճիշտ է, բայց, այնուամենայնիվ, սխալ-տոմաստիկ է:

Մի ուրիշ թղթակից գրում է. «Հիշողությանս մեջ մնացել է այսպիսի մի դեպք: Մեզ մոտ Վյազնիկովսկու «Էռույս» գործարանում (Վլադիմիրի նահ.) 1923 թ. ամենաշատ գործող ջուլհակին պրեմիա տրվեց: Ի՞նչ տեղի ունեցավ դրանից հետո: Հետզհետե պրեմիա ստացած ջուլհակ սկսեց չետ մնալ և արագ կերպով հավասարվեց մնացած բոլոր աշխատողներին: Այս լիովին վերաբերում է ճայեղ մրցություններին: Հարկավոր չե նրանցով հափառվել»:

Գոյություն ունեն նաև այլ, այսպես ասած՝ ավելի լուրջ կարծիքներ մրցությունների պետք չլինելու մասին:

«Մրցություններ կազմակերպելու ժամանակ,— գրում է ը. Գուլուբըր Մոսկվայի նահանգի Յեգորյևի գավառից,— մոտանում են բանվորների առողջությունը: Հատկապես վառ է, յերբ դրա մեջ մեղանշում են միութենական և կոմյերիտական քլիջները: Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել կարելի է հարկավոր է վոչ թե մրցություններով, այլ աշխատանքից բացակայելու և խոտանի (ծրակ) դեմ ամենորյա պայքարով: Մեզ մոտ այս գործով զբաղվում են արտադրական հանձնաժողովները: Իբրև կանոն նրանք թույլ են աշխատում: Զփութացնելով ուժերը մրցություններ կազմելու վրա, հարկավոր է ուժեղացնել արտադրական հանձնաժողովների աշխատանքը»:

Ինչպես տեսնում եք, կողմնակիցների պատճառաբանությունները, ինչքան ել մրցությունների պետք չլինելուն վերաբերող պատճառաբանություններն անհամողեցուցիչ ու նույնիսկ սխալ լինեն, մեզ հրավիրում են ավելի լուրջ վերաբերվել նրանց: Մրցությունների պետք չլինելու տրամադրությունները ըզխում են նրանից, վոր մենք առանձին դեպքերում նրանց իրագործմանը մոտենում ենք մակերեվոլութորեն, կարելի չե ասել, մրցություններն իրագործում եյինք շտապ, վորի հետևանքով նրանք իրենց յետևից բերում եյին բացասական բնույթ կրող փաստեր:

Իսկ ամենազլխավորը, վորի վրա մենք այժմ պետք է ուշադրություն դարձնենք, այդ մրցություններից ստացած հետևանքների ամբողջումն է և նրանց իրագործման կրճատումը: Կրճատման տակ պետք է հասկանալ այն, վոր մի գործարանում մրցություններն այնքան հաճախ չկազմակերպվեն, ինչքան այդ տեղի ունեցող առաջներում: Չե վոր ամեն տեսակ ոգտակար գործ անշնորհք, անմտածված իրագործ-

ման ժամանակ կարող ե Վոչ միայն կասկածներ հարուցել նրա նպատակահարմարության վերաբերմամբ, այլև ուղղակի ֆրաս բերել: Նույնը կարող ե պատահել նաև լավագույն արտադրական աշխատողի մրցությունների դեպքում: Մենք նրանց կատարման ժամանակ պետք ե համակենտրոնացնենք Վոչ միայն միության ու գործարանի վարչության, այլև բոլոր բանվորներին ուշադրությունը: Սրա համար անհրաժեշտ ե ավելի լայն հիմքերի վրա զնել մրցություններին նշանակությունը պարզաբանող աշխատանքը յերիտասարդության և հասակավոր բանվորներին մասսաներում: Մենք, առանց մրցություններին իրագործման քանակը չափազանցելու, պետք ե հասնենք այն բանին, վորպեսզի ձեռք բերած արդյունքներն ամբացվեն Վոչ միայն մրցության իրագործման որերում, այլև հետո: Հենց այս ե լավագույն արտադրական աշխատողի մրցություններին իրականացման խնդիրը, մրցություններ, վոր ամեն կերպ լավացնելով պետք ե իրագործենք:

ՀԱՍՍԱԿԱՎՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ Ո՞ՒՏԱԳՈՐԾՄԱՆ ՅԵՎ ՀԻՆ  
ՎԱՐՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅԻՍՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Վերջերս, կոնֆերենցիայի բացումից առաջ մեր մամուլի եջերում բոլորս կարգացինք այն ցնցող սոսկալի պատմությունը, վոր բանվորները ձեծել են դեռահաս-աշակերտ Բեյրախին: Այդ յեղի ե Իվ-Վոզնեսենսկի նահանգի Սերեդա քաղաքում հեղափոխության տասներորդ տարին: Հրեա-պրոլետարին ձեծելուն մասնակցել են Վոչ միայն հետամնաց անկուսակցական բանվորները, այլև կոմսունիստները և կոմյերիտականները: Ահեղ սև-հարյուրակային տրամադրությունները, վոր այնքան կատաղի կերպով իրենց զգալ էին տալիս Իվ-Վոզնեսենսկի նահանգում 1915—17 թ. թ., իրենցն արեցին: Նրանք ճեղքեցին պրոլետարական գիտակցության ամբարտակը, գուրս յեկան և ցույց տվեցին անտիսեմիտիզմի սոցիալ-քաղաքական իմաստի մի նմուշ:

Այս տրամադրություններն աստիճանացույց են Վոչ միայն սոցիալ-քաղաքական ֆրասի, այլև մի փաստ են, թե ինչպես շին վարպետականության (мастеровщина) տրամադրությունները վերջին տարիներում պատուվածք են առաջ բերում բանվորների և բանվոր յերիտասարդության միջև հաստատված փոխհարաբերություններում: Վարպետների և աշակերտների հին փոխհարաբերությունները, վոր հեղափոխությունը Վոչնչացրել ե, նորից սկսում են հաղթանակել:

Յեթե ը. Բեյրախի վրդովեցուցիչ ձեծի փաստում մենք տեսնում ենք անտիսեմիտիզմի արտահայտությունը, ապա նույն նահանգի Տեյկովի գավառի Եկարմիր Հոկտեմբերը գործարանում դեռահաս բան-

վորին ծաղրի յենթարկելու մի այլ փաստ, վարդաճեճերի կողմից առ-  
կեռճեճերից ծագրի յեճքարկելու բարձրագույճ արտահայտութուճճ ե:

Այս յերկրորդ փաստում, վոր տեղի յե ունեցել Սերեղայի գոր-  
ծարանի ընկեր Բեյրախի հետ պատահած անցքից միքանի որ հետո,  
մենք անտիսեմիտիզմ չենք տեսնում, բայց դրա փոխարեն այստեղ  
տեսնում ենք «հին վարպետականության» վրդովեցուցիչ վարմունք,  
վոր տեսել ենք կապիտալիստական հին ֆարրիկայում 1912—17 թ. թ.:

Հին վարպետականության եյությունը մենակ «մաղարիչը» կամ  
վարպետի համար դինու և գարեջրի վաղելը չեր: Վճչ, այդ ավելի խոր  
արմատներ ունի: Այդ պարունակում ե իր մեջ այն, վոր վարպետի  
ամբողջ աշխատանքի ժամանակ կուտակած փորձը չի փոխանցվում  
նոր սերունդներին: Պատահում եր, վոր հետաքրքրվում ես վարպետի  
աշխատանքի յեղանակներով ու բովանդակությամբ, կանգնում ես  
նրա մոտ, դիտում նրա բոլոր շարժումները, նա քեզ վնդում ե, և  
յեթե կամավոր չես հեռանում, ապա քեզ ձեծով ե հարկադրում հեռա-  
նալ: Իհարկե, բոլոր բանվորներն այսպես չեյին, դիտակիցներ ել շատ  
կային, բայց այն ժամանակ տարածված հարեցողությունը նպաս-  
տում եր «վարպետականության» տարածմանը:

Ահա թե ինչու մենք բանվոր դասակարգի հետ միասին պետք ե  
շիկացած յերկաթով այրենք ու վոչնչացնենք «վարպետականության»  
հին վերաբերմունքի արտահայտությունը դեպի ուսուցումն ու աշ-  
խատանքի յեկած բանվորների նոր սերունդը: Մենք «հին վարպետա-  
կանության» արտահայտությունների եյությունը բանվորներին բա-  
ցատրելով, պետք ե ձգտենք հասնել այն բանին, վորպեսզի ամեն  
անգամ ամեն մի այսպիսի վրդովեցուցիչ վարմունքի համար ավելի  
լայն կերպով ցնցենք բանվոր դասակարգի հասարակական կարծիքը:  
Մեզ հարկավոր չի բանվորների մեկուսացումն ըստ ազգության և  
նրա բաժանումը յերիտասարդ և հին բանվորների, այլ նոր սոցիալիս-  
տական կյանք ստեղծող պրոլետարիատի ընդհանուր գիտակից մի կու-  
րեկտիվ:

Մեզ հարկավոր ե բանվորների և բանվոր յերիտասարդության  
առանձին խմբակների հարաբերությունների լավացման հիման վրա  
հասնել այն բանին, վոր պրոլետարիատի ավագ սերունդների աշխա-  
տանքում ձեռք բերած փորձը լիակատար գիտակցությամբ փոխանցվեր  
սուաջին անգամ արտադրություն յեկած նոր սերնդին: Այս գործնա-  
կանորեն իրագործելու համար Համ.ԼիՅեՄ պետք ե բոլոր մի-  
ջոցները ձեռք առնի բարձրացնելու բանվոր յերիտասարդության աշ-  
խատանքի կարգապահությունը և նրանց մեջ ավելի ուշադիր վերաբեր-  
մունք ստեղծի դեպի հասակավոր բանվորները: Յեթե մենք պահան-  
ջում ենք հասակավոր բանվորներից ամենազգայուն վերաբերմունք

դեպի բանվոր յերիտասարդութունը և իրենց հարուստ փորձը նքանց փոխանցելը, փորձ, վոր յերբեմն անհասանելի յե տեխնիկապես գրազետ վարպետներէ համար, ապա իր հերթին բանվոր յերիտասարդութունից մենք պետք և պահանջենք նույնպես ամենաուշադիր բարձր ընկերական վերաբերմունք դեպի վարպետները:

Անցյալ ամբողջ աշակերտական պատմութեան փորձից մենք տեսել ենք, վոր դեպի վարպետն ամենից ավելի ուշադիր ու զգայուն աշակերտն ավելի շատ և վորակում ստացել: Այս պատճառով ել վորակումն ստանալու համար բանվոր յերիտասարդութունը պետք և գործով ապացուցի իր լավագույն վերաբերմունքը դեպի վարպետը: Ահա թե ինչու մենք պետք և լավացնենք պրոլետարիատի սերունդներին ընկերական փոխհարաբերութունները, վոր այնքան անհրաժեշտ են աշխատանքի հաջորդականութեան, մեր յերկրի տեխնիկայի լավացման և արտադրութեան կազմակերպման ու տնտեսութեան ամբողջ շինարարութեան համար մղվող պայքարում:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԼԵՏ ՄԻԱՏԵՂ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ  
ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՍՄԱԿԻՄ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Վերջին հարցը, վորի վրա յես միքանի բողոք կանգ կառնեմ,— այդ Համկիցեմ միատեղ աշխատանքն և մասնագետների հետ: Այս մասին Կենտկոմի գեկուցման մեջ շարժական շատ խոսվեց, և մենք կղնենք միայն այն հարցը, թե այժմ կոնկրետ ու գործնականորեն ինչ պետք և անենք, վորպեսզի գրավենք մասնագետներին կոմյերիտմիութեան հետ միատեղ աշխատելու:

Նախ՝ հարկավոր կլինի ուժգին ու լայն պայքար մղել յերիտասարդութեան ու մասնագետների փոխհարաբերութունների անորմալութունների և գոյութուն ունեցող մասնագիտակերութեան դեմ: Այս կլինի ամենալավ բանը, վոր կարող և խթան հանդիսանալ ապահովելու մասնագետներէ գրավումը մեր կոմյերիտական աշխատանքի մեջ արտադրական կյանքին մասնակցելու ասպարիզում:

Յերկրորդ՝ անհրաժեշտ և ավելի լուրջ ոգտագործել մասնագետներին բանվոր յերիտասարդութեան ժողովներում, խմբերում և մասսայական աշխատանքի այլ ձևերում տեխնիկական ու ամբողջ արտադրական պրոպագանդի համար: Այն դրութեանը, վոր արտադրական խմբերի ղեկավարութեան համար հարկավոր են վորոշակի մասնագիտական գիտելիքներ, վճռականապես պահանջում և այդ գործի մեջ՝ գրավել մասնագետներին: Միութեան առանձին ուշադրութեանը պետք և կենտրոնանա այն բանի վրա, վոր մեր միութեան յերի-

արտասարգութեան արտադրական կյանքին մասնակցելու աշխատանքը համարեցնի բանվոր յերիտասարգութեան խմբակներէ առանձնահատկութիւններին, այսինքն նրա հասակային կազմին և արտադրական նշանին: Մենք պետք է աշխատանքի առանձին ու տարբեր ձևեր ունենանք ֆարգալուչի զպրոցների բանվոր յերիտասարգութեան, անհատական բրիգադային աշակերտութեան, վորակյալ պատանեկութեան և ոժանդակ չվորակյալ բանվոր յերիտասարգութեան համար: Այս խնդիրը ներկա պայմաններում բացատրիկ նշանակութիւն է ստանում: Յեթն մենք կարողանանք ճշտութեամբ ոգտագործել այն ձևերը, վորոնք վորոշված են մեր բանաձևով, և այն գործնականում կիրառել ամեն մի արտադրական բջիջում, ապա զբանով իսկ կհասնենք այն քանին, վոր բանվոր յերիտասարգութիւնն ակտիվ մասնակցի ամբողջ արտադրական պրոցեսին, և կգարգացնենք յերկրի ամբողջ տնտեսական շինարարութիւնը: Այսպիսով այն հարցը, վոր բանվոր յերիտասարգութեան կրթութիւնը կապվի նրան ակտիվ կերպով արտադրական կյանքի մեջ գրավելու հետ, ներկա պայմաններում կոմյերիտմիութեան հիմնական ու ամենագլխավոր խնդիրներից մեկն է: Մենք պետք է զնենք բանվոր յերիտասարգութեան լայն մասսաների առաջ արտադրութեան խնդիրների պարզաբանման, սոցիալիստական ռացիոնալացման իրագործման հարցն այնպես, ինչպես յերեք չենք յրել: Մենք պետք է հասնենք այն քանին, վոր ամեն մի կոմյերիտական և յերիտասարգ բանվոր պարզ հասկանա արտադրական կյանքին մասնակցելու անհրաժեշտութիւնը: Յերբ ամեն մի կոմյերիտական իր անձնական փորձի հիման վրա ամեն մի յերիտասարգ բանվորի կկարողանա գործնականորեն գրավել կոնկրետ մասնակցելու արտադրութեան լավացման ամբողջ պրոցեսին և նրա վերասարքավորմանը, միայն այն ժամանակ մենք վոչ թե խոսքով, այլ գործով կկարողանանք ցույց տալ մեր կուսակցութեանը և ամբողջ յերկրին անհրաժեշտ գործնական ոգնութիւն և կարագացնենք տնտեսութեան փոխանցման պրոցեսը «գյուղացու, աղքատ-գեղջուկի ձիւղջ խոշոր մեքենային արդունագործութեան և ելեկտրիֆիկացիայի ձիւղջ» (ճալիւր):

### Յ Ե Զ Ր Ա Փ Ա Կ Մ Ա Ն Խ Ո Ս Ք

Ընկերներ, ինչպես և կարելի չի սպասել, վիճարանություններէ հիմնական հարցը դարձան արտադրութեան մեջ դեռահասներէ բրոնյայի և Ֆարբիկա-դործարանային աշակերտութեան զարոցներէ հարցերը: Որինակ՝ հարուցվեց այն հարցը, վոր իրը թի բրոնյայի տոկոսի վերաքննութիւնը միայն վորակյալ բանվորական ուժի նկատմամբ, կարծես, հանդիսացավ մեր թույլ աշխատանքի հետեանքը, վորովհետև կոմիտիումիութեան համագումարի վճիռները բրոնյայի  $\%$  վերաքննութեան մասին չիրականացվեցին: Այս մեղադրանքը, վոր ներկայացվում է ամբողջ միութեանը, կարծում եմ, ամբողջովին անհիմն է: Միութեան VII համագումարից հետո մենք աշխատանքի պրոցեսսում արդյունաբերութեան մի ամբողջ շարք ճյուղերում և առանձին արտադրութիւններէ մեջ վերաքննել ենք դեռահասներէ բրոնյայի  $\%$  և նրանցից մի քանիսի վերաբերյալ սահմանել ենք նոր  $\%$ : Մասնավորապես, մի քանի ամիս սրանից առաջ, մենք վորձեցինք վերաքննել մանածագործական արդյունաբերութեան բրոնյայի տոկոսը: Բայց այդ մենք կենսագործել չեցինք կարող, վորովհետև մանածագործական արդյունաբերութեան այն ժամանակվա ծանր կացութիւնը թույլ չի տալիս մեզ զբաղվել այդ լուրջ աշխատանքով, վորովհետև արդյունաբերութեան կացութեան այդպիսի ծանր պայմաններում մենք անխուսափելիորեն այնպիսի յեղբակացութիւններէ կը հանգեցինք, վոր անհրաժեշտ է արտադրութեան մեջ դեռահաս բանվորներէ բրոնյայի տոկոսի կրճատում և այդ շատ ավելի մեծ չափով, քան յենթադրում ենք այժմ:

Բրոնյայի հարցի նկատմամբ հարցեր հարուցվեցին նույնպես և այն մասին, վորպեսզի բրոնյայի  $\%$  վերաքննելիս, այն քննվի միայն աշակերտութեան համար: Ընկերներ, դեռահասներէ բրոնյայի քննել միայն վորակյալ բանվորական ուժի նախապատրաստման տեսակետից, աշակերտութեան տեսակետից—բացարձակապես սխալ է: Մենք հայտարարում ենք, վոր այժմ բանվորական ուժի նախապատրաստումը կարող է տեղի ունենալ վոչ միայն դեռահասներէ բրոնյայի հաշվին, այլև արհեստակցական-տեխնիկական կրթութեան այլ տեսակներէ հաշվին: Բանվորական ուժը կարող է վերաբրտադրվել վոչ միայն յերիտասարդութիւնից, այլև հասակավոր բանվորներէ: Յեւակեա ունենալով այն բանը, վոր մենք այժմ դեռահասներէ բրոնյայի հաշվելու



ցենք միայն վորակյալ բանվորական ուժի նկատմամբ, վիճարանություններին հանդես յեկողներէց մեկը լիովին նպատակահարմար ձևով առաջ քաշեց այն լողունգը, վոր ֆարբիկա-դործարանային աշակերտության զպրոցները 100% ընդգրկեն բանվոր յերիտասարդությունը: Այս հաստուժը (УСТАНОВКА) բոլորովին ճիշտ եւ և նա արժանի յհատուկ ուշադրության:

Հետեյալ հարցը՝ բանվոր յերիտասարդության պրոֆտեսինիկական կրթության մասին եւ: Ընկեր Նոսովը հարց հարուցեց, վորպեսզի այժմ դիմենք ֆարգավուչի զպրոցների յերկու տիպի անդամատելուն, ասենք, զպրոցի առաջին տիպը պատրաստեր բարձրորակ բանվորական ուժ և յերկրորդ տիպը—ֆարգավուչի զպրոցները—պատրաստեր միջին վորակման, մասսայական վորակման աշխատողներ: (Շոխիճ օեղից.—ձիշտ ե): Ընկեր Շոխինը հուշում ե ինձ, վոր այդ ճիշտ եւ Յես վարժում եմ, վոր այժմ մենք այս հարցը լուծելու հնարավորություն չունենք: Բայց, ընկերներ, հարկավոր կլինի, վոր մենք բանաձևում հատուկ ուշադրություն դարձնենք մի կետի վրա, վորի մեջ խոսվում ե ֆարգավուչների զպրոցներին կից հատուկ կուրսեր կազմակերպելու մասին: Այդ հատուկ կուրսերի կազմակերպությունն ել կարելի յե դիտել իբրև մի քայլ դեպի մտցված առաջարկը, վոր վերաբերում ե ֆարգավուչների զպրոցների անդամատելուն: Այնպես վոր յես կարծում եմ, թե այժմ աննպատակահարմար ե դնել ֆարգավուչի զպրոցի յերկու տիպի անդամատելու հարցը, բայց անհրաժեշտ ե, վոր մենք ուշադրություն դարձնենք ֆարգավուչի զպրոցներին կից կուրսեր կազմակերպելու վրա:

Իմ կարծիքով, հատկապես լուրջ եյին այն յելույթները, վորոնք վերաբերում եյին պրոֆտեսինիկական կրթության ղեկավարությունը ԺՏԳԽ, այսինքն տնտեսական կազմակերպություններին հանձնելու հարցին: Ընկերներ, այն պատճառաբանությունները, թե ինչու մենք պետք ե այդ առաջարկին դեմ արտահայտվենք, յես չեմ բերի, վորովհետև նրանք հայտնի յեն ամբողջ միությանը և հասկանալի յեն մեզնից ամեն մեկի համար: Յես միայն ստիպված եմ ձեզ հաղորդել, վոր մեր միության կենտրոնական կոմիտեն վերջին շրջանում, հաշվառելով տնտեսավարների ֆարգավուչի զպրոցների ղեկավարությանն անմիջապես մասնակցելու տրամադրությունը, վորոշում ընդունեց գործարանի վարչության կից աշակերտության վերաբերյալ հատուկ հանձնաժողովներ կազմակերպելու: Յես կարծում եմ, վոր կենտրոնական կոմիտեյի այս վորոշումը լավագույն խթանը կհանդիսանա և տնտեսավարներին կըրդի ֆարգավուչի զպրոցների աշխատանքը լավացնելու:

Հետեյալ հարցը, վոր հարուցվեց, վերաբերում ե միության այս-

պես կոչված մասսայական աշխատանքին և հալաքական պայմանազրեբի վերակնքմանը: Պարզ ե, վոր վերջերս, աշխատավարձի կարգավորումն անմիջապես ձեռնարկությունն փոխադրվելու պայմաններում, հալաքական պայմանագրերի նշանակությունը կոմյերիտական աշխատանքի պրակտիկայում բացառիկ նշանակությունն և ստանում: Հալաքական պայմանագրերի վերականգնման վերջին կամպանիան մեզ ցույց տվեց նրա նկատմամբ յեղած յեռանդագին ուշադրությունը, յերբ այն քննվում եր յերիտասարդության ավելի լայն մասսաների կողմից: Ինչ վերաբերում և միութեան մասսայական աշխատանքին, ապա մեր միութեան մասսայական տնտեսական աշխատանքի ամբողջ սխտեմն իր հիմքում պետք և հանգի այն բանին, վորպեսզի ուշադրությունը կենտրոնանա մեր միութեան, պետական ու արհեստակցական կազմակերպությունների այն բոլոր վորոշումները յերիտասարդությանը յուրաժամանակ պարզաբանելու վրա, վորոնք վերաբերում են բանվոր յերիտասարդութեան աշխատանքի ու կրթութեան հարցերին: Այս մասին ասված և նաև մեր բանաձևում:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ  
ՊԱՅԳԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Յես այժմ ձեր ուշադրությունը կհրավիրեմ այն վերջին հարցի վրա, վորի մասին յես չխոսեցի իմ զեկուցման մեջ, — այդ յերիտասարդութեան գործադրկութեան և նրա դեմ պայքարելու միջոցների հարցն ե:

Չնայած յերկրի արդյունաբերութեան և ամբողջ ժողովրդական տնտեսութեան բուռն աճումին և արդյունաբերութեան մեջ զբաղված գեռահասաների թվի նշանակալի մեծացման պրոցեսին, յերիտասարդութեան գործադրկութեանը վոչ միայն չի քչանում, այլև, պահելով տեական ու ծանր բնույթ, հետագա աճման միտում ել ունի: Յերիտասարդութեան գործադրկութեան աճման պատճառները մեր յերկրում, ուր ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում բուռն կերպով աճում և վարձու աշխատանքը, բնութագրվում և գլխավորապես նրանով, վոր մտակայում արդյունաբերությունը չի կարող իր մեջ ծծել ամբողջ նոր հասունացող ու առաջին անգամ իր աշխատանքն առաջարկող բանվորական ուժը:

Այս դրությունը հաստատվում և այն բանով, վոր մեր յերկրում, չնայած յետև թողած այնպիսի մեծագույն ցնցումներին, ինչպիսին են՝ համաշխարհային ու քաղաքացիական պատերազմը, սովը և մի շարք համաճարակները, վորոնք անփուսափելիորեն ազգաբնակչութեանը պատճառել են ահագին զոհեր ու կորուստներ, — մենք, այնուամենայնիվ, մի ամբողջ շարք տարիներում ունեյինք յերկրի ազգաբնակչութեան բու-

որն աճում: Այսպես, վերջին 3 տարվա մեջ Խորհրդային Միության բնակչության ընդհանուր թիվը 139 միլիոնից հասավ 141 միլիոնի:

Յերկշի ազգաբնակչության աճումը, վոր արտացոլում է գործազրկության ընդհանուր աճման մեջ, ամենից առաջ ակնառու արտացոլում է առաջին անգամ իր աշխատանքն առաջարկող յերիտասարգութայն գործազրկության մեջ:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇԱՐՓՈՒՄԸ

Թվականը	ԽՍՀՄ 256 աշխ. բորսայում հաշվառման յենթարկված գործազուրկների ընդհանուր բանակը	Գրանց թվում զեռահասաներ	
		Բացարձակ թիվը	$\frac{0}{100}$ գործազուրկների ընդ. թվի նկատմամբ
1/VIII — 25 թ.	908,400	101,200	11,1
1/I — 26 թ.	951,200	116,000	12,2
1/IV — 26 թ.	1,056,500	127,900	12,1
1/VIII — 26 թ.	1,030,000	135,707	13,2
1/X — 26 թ.	—	151,720	—

Աշխատանքի բորսայում զբանցված յերիտասարգութայն շարժումը, վոր յերեւում է բերած աղյուսակից, պարզ ապացուցում է գործազրկության աճումը յերիտասարգութայն մեջ, վոր մեծացնում է աշխատանքի բորսայում զբանցված գործազուրկ զեռահասաների ընդհանուր թիվը մեկ տարվա ընթացքում 19,700 կամ 34%: Գործազուրկ զեռահասաների աճումը նկատվում էր և առաջները: Այսպես, 1923 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1924 թ. հոկտեմբերը գործազուրկ զեռահասաների թիվը մեծացավ 35%, իսկ 1/X 24 թ. մինչև 1/X 25 թ. նրանց թիվը մեծացավ 25%: Մեր բերած տվյալները բնութագրում են յերիտասարգութայն գործազրկության ընդհանուր թիվը և աճումը միայն այն կարգերի մեջ, վորոնք զբանցված են աշխատանքի բորսաներում: Իսկ քաղաքներում և քաղաքային շենքերում վոչ մի զբաղմունք չլունեցող բոլոր զեռահասաները, ըստ Աշխժողկոմատի տեղեկութայնումների, մեկ միլիոնից պակաս չեն:

Ներկայումս բանվոր յերիտասարգութայն աշխատանքի ու կրթութայն ասպարիզում գործող կոմյերիտական աշխատողներից վոմանք այն տպավորութայն են ստացել, վոր իբր թե աշխատանքի բորսաներում հաշվառված գործազուրկ զեռահասաների թվի մեծացումը, զըլխավորապես, տեղի յե ունենում ազրաբային զերբնակչութայն-հետեանքով, գյուղից գործազուրկ յերիտասարգների քաղաք թափվելու հետեանքով: Յերիտասարգութայն գործազրկության շարժման այսպիսի վորոշումն սխալ է: Այդ սխալը հաստատվում է այն բանով, վոր յերիտասարգութայն գործազրկութայն առայժմ զըլխավորապես լրանում

և հենց քաղաքների հասունացող յերիտասարդության բնական աճով, իսկ հետագա տարիներում, ասենք 1928 թ., այդ աճը կկրճատվի, վերջինսե իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմի ժամանակ ծնելիությունը (рождаемость) կրճատվեց:

Գործազուրկ դեռահասների կազմի այսպիսի վորոշումը հաստատվում է թեկուզ նույնիսկ այն փաստով, վոր վերջին չորս տարվա մեջ քաղաքների բնակչության թիվը շատացել է 1,200,000 մարդով: Սակայն, յերկետ ունենալով այն, թե քաղաքի բնակչության թվի մեծացումը կատարվել է մի խոշոր չափով այն վորակյալ և կիսավորակյալ վարձու բանվորական ուժի հաշվին, վոր քաղաք է յիկել արդյունաբերության աճման հետևանքով և չի կորող բնորոշ ցուցիչ լինել, — անմիջականորեն դիմենք Ուկրայինայի 24 աշխատանքի բորսայի դեռահաս գործազուրկների սոցիալակոնց կազմի թվանշաններին:

ՈւկրԱՅԻՆԱՅԻ 24 ԱՇԽ. ԲՈՐՍԱՅԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ 1926 թվին ԸՍՏ ԱՄԻՍԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ԵՆ ԱՅՍԲԱՆ ԴԵՌԱՀԱՍՆԵՐ \*

Գրանցված են՝	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	ընդամենը 5 ամսում
Բանվորների յերեսաններ	1282	1642	1647	1678	1762	8011
Մտառյողների »	304	497	389	510	527	2227
Գյուղացիների »	351	248	204	158	217	1278
Մանկատների »	89	455	188	157	575	1164
Գործազուրկների »	268	421	289	356	547	1881
Մյուսների »	278	556	475	609	583	2501
Ընդամենը . . . . .	2,572	3,819	3,192	3,468	3,911	17,062

Բերած աղյուսակը վկայում է, վոր գյուղից յեկած գործազուրկ յերիտասարդությունը (5 ամսում) հաշվառած դեռահասների ընդհանուր մասսայի համեմատությամբ կազմում է միայն 1278 մարդ կամ 7,4<sup>0</sup>/<sub>100</sub>: Իսկ գործազուրկ դեռահասների հիմնական մասսան, վոր ըստ սոցիալական դրության հաշվառված է 24 աշխատանքի բորսայի միջոցով, բանվորների և ծառայողների յերեսաններն են, վոր կազմում են գործազուրկ յերիտասարդության ամբողջ մասսայի 72,5 տոկոսը:

Գյուղական վայրերից յեկած գործազուրկ դեռահասների չնչին թիվը դեռ վրչինչ չի ասում գյուղի գործազրկության չափերի և այդ գործազուրկների քաղաք գալու մասին:

\* Տվյալները վերցրած են Ուկ. ԽՍՀ Աշխտողմտախ նյութերից և տարածվում են միայն ըստ սոցիալական դրության հաշվառած դեռահասների վրա:

Գյուղից գործազուրկ յերիտասարդութունը գալիս և քաղաքները և հատկապես զավստական քաղաքները շատ մեծ չափերով, քան այդ ցույց և տրված մեր վերեր բերած աղյուսակում: Սակայն նրանց չնչին լինելը աշխատանքի բորսայում բացատրվում և այն բանով, վոր գյուղից քաղաք ընկած զեռահասները համեմատաբար փոքր քանակն և մնում քաղաքում: Իսկ մնացած մասան, քաղաքում զեռահասներին ահագին գործազրկութեան շնորհիվ, աշխատանք չգտնելով, նորից վերադառնում և գյուղ:

Այսպիսով, յերիտասարդութեան գործազրկութունը սնող հիմնական ու գլխավոր աղբյուրը, հասակավոր վարձու աշխատավորների գործազրկութեան համեմատութեամբ, հանդիսանում և յերկրի ազգաբնակչութեան աճումը, յիվ յերիտասարգութեան գործազրկութունը քի հիմնական ճաստայով առայժմ լրանում և վոյ քե ազգաբայից գերբնակչութեան հաւելից, այլ բազմի յերիտասարգութեան բնակեան և քի հաւելից:

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԻՆՈՒՅԹԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆԻ ԾՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ.

Մեր տրամադրութեան տակ յեղած տվյալները, վոր վերաբերում են արդունաբերութեան մեջ զեռահասները աշխատանքի պահանջին, բնութագրում են գործազրկութունը իբրև տեղական կարգի յերևույթ: Բոլորիս հայտնի յե, վոր արդունաբերութունն իր վերականգնման պրոցեսում վորակյալ բանվորական ուժի կարիքը գլխավորապես բավարարում եր այն վորակյալ կադրերի հաշվին, վորոնք քաղաքացիական պատերազմի տարիներում և արդունաբերութեան պահածո կայութեան ժամանակ փոշիացած եյին: Միայն վերջերս արդունաբերութեան զարգացման և գործազուրկ վորակյալ բանվորական ուժի աղբյուրը նշանակալի սպառման հետեանքով մեծանում և ու կըզարգանա արդունաբերութեան նոր վորակյալ բանվորական ուժի պահանջը, վորի նախապարաստումը վորոշ ժամանակ հետո աֆխուսափելի կերպով կառաջացնի զեռահասների ախտահանելի պահանջի միացում:

Յերիտասարգութեան գործազրկութեան տեղական ու ծանր բնույթը բացատրվում և այն բանով, վոր յերիտասարգութեան գործազրկութեան աճման ու արդունաբերութեան բանվորական ուժի պահանջի միջև վորոշ տարաձիւտում (расхождение) կա: Արդունաբերութունն իր վերականգնման նրոցեսի անցած շրջանում, չնայած վարձու բանվորական ուժի հսկայական աճմանը ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում, չկարողացավ արագ սպառել յերիտասարգութեան գոր-

ճազրկութիւնը: Այս բացատրվում է այն բանով, վոր գործազրկութիւնը, հիմնականում սնվելով յերիտասարդութեան նոր կազրերի աճման հաշիւն, իր կազմի մեջ է առնում առավելագետ իրենց աշխատանքն առաջին անգամ առաջարկողներին: Աշխատանքի բորսաներում գրանցված ղեռահասաների ընդհանուր թվից վարձու աշխատանք կատարածներն առ 1-ն հունվարի 1926 թ. 9,9% էին, իսկ առ 1-ն հուլիսի նրանց 0-ը ցածացավ մինչև 9,3:

Դեռահասաների վորակում չունենալն այն կարևորագույն պատճառներից մեկն է, վոր արգելակ է հանդիսանում յերիտասարդութեան գործազրկութեան վերացմանը: Այս դրութիւնը հասցնում է այն բանին, վոր, չնայած արդունարերութեան մեջ զբաղված յերիտասարդութեան թվի աճի մեծացմանը, յերիտասարդութեան գործազրկութիւնը տեական ու ծանր բնույթ է ստանում: Արդունարերութեան վարձու բանվորական, ուժի պահանջի ու յերիտասարդութեան նոր գործազուրկ կազրերի աճման անհամապատասխանութիւնը է յերիտասարդութեան գործազրկութեան ծանր բնույթը վառ կերպով վկայում են այն տվյալները, վոր բերում ենք ղեռահասաների աշխատանքի ղուկայի մասին:

ԴԵՌԱՆԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ (ՈՒԿՐԱՅԻՆԱՅԻ 24 ԱՇԽ. ԲՈՐՄԱՅԻ ՏՂՅԱԼՆԵՐՈՎ).

ԹՎԱԿԱՆԸ	Գրանցված են ղեռահասաներ	Պահանջ է ներկայացված							Աւթատանքի յե ուղարկված						Մնացին գործազուրկ գեռահասաններն են:
		Բրնթարտ	Գեղարտ	Տնայնարտ	Տնայնարտ	Արտարտ	Արտարտ	Ընդամենը	Բրնթարտ	Գեղարտ	Տնայնարտ	Տնայնարտ	Արտարտ	Արտարտ	
III/26 թ.	2572	228	227	124	64	206	849	229	228	124	64	209	854	22,267	
IV « . .	3819	203	203	108	22	481	1097	209	283	108	22	481	1703	23,973	
V « . . .	3192	191	184	117	12	245	749	189	204	117	12	264	786	24,291	
VI « . . .	3468	262	209	104	—	256	631	262	210	104	—	297	873	21,728	
VII « . . .	3911	162	368	76	9	217	832	162	368	76	9	251	866	22,718	
Ընդամենը	17062	1046	1271	529	107	1405	4558	1051	1293	529	107	1502	4486		

Այս տվյալները վառ կերպով ցույց են տալիս, վոր գործազուրկ ղեռահասաների 17 հազար աճի հանդեպ աշխատանքի ղուկայում 4,350 ղեռահասան պահանջ էր ներկայացված, իսկ ղեռահասաների մնացած մասն ալետը է լրացներ գործազուրկ ղեռահասաների յեղած կազրերը:

Յերիտասարդութեան գործազրկութեան այս յուրատեսակութիւնը

նը և ծանր բնույթը հաշվի առնելով, կոմյերիտմիությունը յերիտասարդութեան գործադրկութեան դեմ մղվող պայքարում պետք է ձգտի ավելի վճռական ու կոնկրետ միջոցների հասնել: Այն դրութեանը, վոր գործազուրկ յերիտասարդութեանն ամենից քիչ է դասակարգային դաստիարակութեան մեթոքովում, և վոր գործադրկութեանը յերիտասարդութեան վորոշ աստու մ առաջ է բերում դեպի հակախորհրդային հունն ուղղված անստողջ ակտիվութեան, պահանջում է կոմյերիտմիութեանից այնպիսի միջոցներ ձեռք առնել, վորոնք յերիտասարդութեան գործադրկութեան դեմ մղվող պայքարին տային հասարակական բնույթ և յերիտասարդութեանն արտադրութեան մեջ գրավելուն՝ պլանային կարգ:

Մենակ աշխատանքի մարմինները չեն կարող այս խնդիրը զուգբերել: Այս պատճառով միութեան աշխատանքի կենտրոնական պորբիմն այսպիսի բացասական յերևույթի դեմ պայքարելու ասպարիզում, ինչպիսին յերիտասարդութեան գործադրկութեանն է, պետք է լինի՝ հասարակութեան ուշադրութեանը գրավել դեպի այդ գործը և առաջին հերթին այնպիսի կազմակերպութեաններին, ինչպիսին են արհեստակցական միութեանները և Աշխոդկոմատի մարմինները: Այս պորբիմի առաջ քաշելը մանավանդ անհրաժեշտ է, քանի վոր մինչև այժմ, չնայած մի ամբողջ շարք հասարակական կազմակերպութեանների միշարք վճիռներին՝ ուժեղացնել յերիտասարդութեան գործադրկութեան դեմ մղվող պայքարը, համապատասխան միջոցներ ձեռք չառնվեցին, և հենց աշխատանքը կատարվում էր վոչ պլանային կարգով և բոլորովին անբավարար էր:

Այս աշխատանքում կոմյերիտմիութեան, արհմիութեաններին և Աշխոդկոմատի մարմիններին զխալթը ուշադրութեանը պետք է կենտրոնացվի ճեպնագործական արգունաբերութեան մեջ առակերութեան գարգացման լեվ գործազուրկ դեռահասների աշխատանքում ու նյութական ոգնութեան լայնացման վրա:

Գործադրկութեան դեմ պայքարելու գործում, արտադրութեան մեջ դեռահասների բրոնյան իրագործելու կողքին, հատուկ նշանակութեան է ստանում յերիտասարդութեանը գերբրոնյայով արտադրութեան մեջ քաշելու հետագա խնդիրը: Գերբրոնյայի նշանակութեանը բարձրանում է հատկապես ավագ հասակի դեռահասներին և 18 տարեկանից անց յերիտասարդութեան գործադրկութեան դեմ պայքարելու գործում:

Վերջին շրջանում առանձին ռայոններում աշակերտութեան գարգացումը գերբրոնյայի միջոցով վորոշ թույլ տեմպ է ստացել: Այդ թուլացումը բացատրվում է այն բանով, վոր միշարք ձեռնարկութեաններում դեռահասներին բրոնյան լիովին չէր լրացված, գործադրկութեան համար նպատակատար կոնստիդենտը բավարար չէր և այն: Յե-

Երևասասարգությունը գերբրոնյայով արտադրութեան մեջ գրավելու այս տեսակի թուլացման հիման վրա տեղեկում փորձեցին յեզրակացնել, վոր արդյունաբերությունը հագեցած է դեռահասներով, և այս պատճառով պետք է իրագործել գերբրոնյան:

Յերիտասարգութեան գերբրոնյայով ուղարկումի լիկվիդացելային շիմելը, և վոչ թի այն լայնացնելը, ժխալում է հենց կյանքով, գերբրոնյայի կիրառման պրակտիկայով: Այն զրությունը, վոր գերբրոնյան միշարք ռայոններում մասսայական զարգացում ստացավ և հասավ այնտեղ, վոր 1926 թ. սկզբին արդյունաբերութեան մեջ գրավից ավելի քան 15,000 յերիտասարգություն, խոսում է այն բանի ոգտին, վոր գերբրոնյայի իրագործման հնարավորությունները միշարք ռայոններում չեն սպառված, և կոմյերիտմիութեան ու Աշխտողկոմատի ժարմինների տեղական կազմակերպությունների փութաջանութեան ու յեռանդի դեպքում, դեռ կարելի յի գերբրոնյայով արտադրութեան մեջ գրավել գործազուրկ յերիտասարգութեան նշանակալի կազրեր: Գործազուրկ դեռահասները և պատանեկութեան անհրաժեշտ վորակում ստանալը հեշտացնելու նպատակով հարկավոր է տնտեսական մարմինների հետ գերբրոնյայով պայմանագիր կնքելիս հրաժարվել ձեռնարկութեան մեջ գերբրոնյայով սովորող դեռահասները պարտադիր ամրացումից: Իրագործելով հետագայում գերբրոնյայով արտադրություն ուղարկվող յերիտասարգութեան շրջանի լայնացումը, հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել կոմյերիտմիութեան և աշխատանքի ծածկինների այն աշխատանքը զարգացնելու և լայնացնելու վրա, վոր վերաբերում է պահանջի հայտնաբերման և բրոնյայի իրագործման հնարավորութեանը: Վորոչ կոմյերիտական կազմակերպություններ գերբրոնյայի իրագործմանը մոտենում են ձևականորեն և շարունակ չեն, վոր հաշվի յեն առնում տնտեսական մարմինների ցանկությունը: Որինակ՝ Եղուրսկի նահանգում նահգործկոմը ձեռնարկությունների վրա թաշի (разверстка) կատարեց պարտադիր կարգով գերբրոնյայով վորոչ թիվով դեռահասներ ընդունելու համար:

Հարկավոր է զճռականապես հրաժարվել գերբրոնյայի հարկադրական իրագործումից, վորովհետև մեր հասկացողութեամբ գերբրոնյան տնտեսական կազմակերպությունների համար պարտադիր չե: Բայց այս հրաժարումն ամենևին չի նշանակում հրաժարում գերբրոնյայի իրագործումից: Կոմյերիտական կազմակերպությունները, արմիություններ և Աշխտողկոմատի մարմինները յերիտասարգութեան գերբրոնյայով արտադրություն ուղարկելը կիրառելով, ունեցած փորձի հիման վրա արտադրութեան վորակյալ բանվորական ուժի պահանջն ու առաջարկը հայտնաբերելով, պետք է ձգտեն գործազուրկ յերիտասարգությունն ավելի մեծ չափով արտադրութեան մեջ գրավելու:



ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Սակայն, բացի այդ, հարկավոր ե հատուկ ուշադրութիւն կենսորոնացնել գործազուկ յերիտասարդութեան աշխատանքային և նյութական ոգնութեան վրայ:

Գործազուրկ զեռահասաների աշխատանքային ոգնութեան զարգացումը, այսինքն գործազուրկներին աշխատանքային և արտադրական կողմից անհատներին և հասարակական աշխատանքի մեջ քաշվող յերիտասարդութեան շրջանի լայնացումը, միութեան ներկա շինարարական շրջանում, բացառիկ կարևոր գործնական նշանակութիւն ե ստանում գործազուրկութեան զեմ մղվող կողմի տեսակետից:

Մեր յերկրում շինարարութեան զարգացումը հակայական թափ ե ստանում: Ներկայումս գործազուրկներին կողմից անհատներին զարգացող ցանցը իր մեջ ունի մինչև 80—90 հազար բանվորական ուժ: Բացի այդ, կարևոր ե ընդգծել այն փաստը, վոր գործազուրկներին կողմից անհատներին ընդհանուր թվում մինչև 40% արտադրական տիպի կողմից անհատներին: Այսպէս արտադրական կողմից անհատներին գոյութիւնն իր հետեւեալութեանն ե ստանում վոր միայն յերիտասարդութեան գործազուրկութեան զեմ պայմաններու տեսակետից, այլեւ հետեւեալութեանն արտադրական ուսուցումը յեւ հետեւեալութեան գործազուրկ պատճենեալութեան արտադրական ուսուցում կազմակերպելու հնարավորութեանն տեսակետից:

Չնայած այս բոլոր նպատակներու նախադրականներին, յերիտասարդութեանն գործազուրկներին կողմից անհատներին զարգացող գործի նկատմամբ հասեղծվեց համապատասխան ուշադրութիւն: Դեռահասաների թիւը աշխատանքային կողմից անհատներում բոլորովին չնչին ե, իսկ Աշխատող կուսակցութեան հրահանգները յերիտասարդութեանն 10%-ով կողմից անհատներին զարգացող մասին՝ չեն իրագործված:

Յերիտասարդութեանն կողմից անհատներին զարգացող աշխատանքի թիւութեան լավագույն վիճակն հանդիսանում են մեր բերած թվանշանները զեռահասաներին թվի մասին աշխատանքային կողմից անհատներում բայ 1925—1926 թ. մամկնտավոր զեկուցութեանն յերիտասարդութեանն, վորոնք վերաբերում են ՌՍՖՍՀ հիսուն չորս քաղաքի:

ՌՍՖՍՀ ԿՈՂԵԿՏԻՎՆԵՐՈՒՄ ԶԲԱՂՎԱՅՆԵՐԻ ԹՎԻ ՄԱՍԻՆ, 1925—26 թ. թ.

Յ Ե Ռ Ա Մ Ս Յ Ա Կ Ն Ե Ր Ո Վ		Կողմից անհատներին զարգացող բոլոր գործազուրկներին	Դրանց թվում զեռահասաները %/0
Ա.ա	1-ն նոյեմբերի 1925 թ.	53,020	5,4
»	հունվարի 1926 թ.	53,986	5,6
»	ապրիլի » »	46,439	6,5
»	հուլիսի » »	47,714	6,4
»	հոկտեմբերի » »	51,887	6,5

Յերիտասարդության թույլ զբաժումը արտադրական և աշխատանքային կոլլեկտիվները, գլխավորապես, բացատրվում է այն բանով, վոր մենք իր ժամանակին չեյինք կարողանում հարցերը դնել համապատասխան մարմինների առաջ: Մեր կազմակերպութունները, աշխատանքի բորսայում կոմյերիտիության աշխատանքի վորոշ թուլացման և շրջապատող իրականության վոշ յուրաժամանակ հաշվառման հետևանքով, յերբեմն Աշխտողկոմատի մարմինների առաջ դեռահասներին աշխատանքային կոլլեկտիվների և հասարակական աշխատանքների մեջ գրավելու հարցն այն ժամանակ են դնում, յերբ արդեն կոլլեկտիվները համալրված են անհրաժեշտ բանվորական ուժով: Այսպիսի փաստերը լավագույն ցուցիչներն են, վոր գոյություն ունի բյուրոկրատական վերաբերմունք դեպի յերիտասարդության գործադրկության դեմ մղվող պայքարը:

Հետագայում ամեն կերպ վերացնելով այս ճյուղում գործազրկության դեմ մղվող պայքարի գոյություն ունեցող թերությունները, անհրաժեշտ է հասնել այն բանին, վոր աշխատանքային կոլլեկտիվներն ավելի լայն ընդգրկեն գործազուրկ դեռահասներին: Այս աշխատանքին հատուկ նեցուկ պիտի հանդիսանա վերջին համաժիութենական տնտեսական խորհրդակցության վճիռների կենսագործումը, վճիռներ, վորոնք հրահանգում են յերիտասարդությունը գրավել աշխատանքային և արտադրական կոլլեկտիվներն այն տոկոսով, ինչ տոկոս նրանք կազմում են աշխատանքի բորսայում գրանցված գործազուրկների ընդհանուր թվում:

Այն միջոցները, վոր բաց են թողնվում հատկապես գործազուրկ յերիտասարդության արտադրական աշխատանքային կոլլեկտիվներ կազմակերպելու համար, վորոշ կազմակերպությունների կողմից լիովին (ու նույնիսկ բոլորովին) չեն ոգտագործվում: Դեռահասների համար գոյություն ունեցող արտադրական արհեստանոց-տների փոքրիկ ցանցը չարդարացրեց իր վրա դրած հույսերը:

Այս փաստերը, վոր բացառապես վերաբերում են յերիտասարդության գործազրկության դեմ պայքարելուն, պահանջում են, վոր կոմյերիտիութենական կոմիտեները վճռական միջոցներ ձեռք առնեն: Դեռահասների համար գոյություն ունեցող արտադրական արհեստանոց-տների փոքրիկ ցանցն անհրաժեշտ է վերակազմել գործազուրկ յերիտասարդության կոլլեկտիվների: Յերիտասարդության գործազրկության համար Աշխտողկոմատի բաց թողած միջոցները պետք է պարտադրաբար (լիովին ոգտագործելով) ոգտագործել գործազուրկ յերիտասարդության կոլլեկտիվների ցանցի հետագա լայնացման համար, ընդվորում ամենալուրջ ուշադրություն դարձնելով այն բանի վրա, վորպեսզի դեռահասները կոլլեկտիվներում աշխատանքային ոգնության կողքին

ստանան այս կամ այն վորակումը կամ ձեռք բերեն արտադրական ունակություն:

Յերիտասարդության գործադրկության ծանր բնույթը, նրա նյութական անապահովությունը կոմյերիտմիության և Աշխտողկոմատի ժարմինների առաջ դրեցին գործադրկությունից ապահովագրված դեռահասաների շրջանը լայնացնելու խնդիրը: Մենք արդեն ունենք տեղական կազմակերպությունների յեռանդագին պահանջների վորոշ նշույլներ գործադրկությունից ապահովագրվող դեռահասաների շրջանը լայնացնելու մասին: Վորոշ կոմյերիտական կազմակերպություններ տեղերում արդեն կարողացել են լուծել տալ այդ հարցը համամիութենական կարգով: Կոմյերիտմիությունը, իր բոլոր ջանքերը գործադրելով, պետք է հասնի այն բանին, վոր ամենամոտ ժամանակում արհեստակցական միությունները և մյուս համապատասխան կազմակերպությունները լայնացնեն գործադրկության պատճառով նպաստ ստացող գործադուրկ դեռահասաների կոնտինգենտը: Այս յեռանդագին պահանջում է գործադուրկ դեռահասաների իսկական դրությունը: Ներկայումս գործադուրկ դեռահասաների ընդհանուր մասսայից (151 հազար) գործադրկության պատճառով նպաստ է ստանում միայն 15—16 հազարը: Այս թիվը ակներևաբար չի համապատասխանում նպաստի այն պահանջին, վոր ունի դեռահասաների նույնիսկ ամենից կարիքավոր մասը: Պերճախոս կերպով այդ են ասում այն թվերը, վոր վերաբերում են գործադուրկ դեռահասաների նյութական կարիքին:

ԳՐԾՄԱԶՈՒՐԿ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍՈՑԻԱԼԻՍՏԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՌ 1-5 ՀՈՒՆՎԱՐԻ 1926 Ք., ՈՒԿՐԱՅԻՆԱՅԻ 7 ԱՇԽՏՈՐԱՆԵՐԻ ՏՎՑԱՆԵՐՈՎ

(Վարձով չափատամ դեռահասաներ)

Շրջանային (սկրուզային) աշխորսաների անունը	ԳՐԾՄԱԶՈՒՐԿ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ						
	Մնող չունեցողներ	Վարձով աշխատող ծնող ունեցողներ	Վարձով չաշխատող ծնող ունեցողներ	Փորձագուրկ ծնող ունեցողներ	Կենսաթոշակ ստացող ծնող ունեցողներ	Մնող և քեթի մասին տեղեկություններ չկան	Ընդամենը
Խարկովի	115	1984	326	42	96	1272	3835
Կիևի	185	1999	439	106	132	692	3553
Ողեստայի	1528	4856	193	—	—	—	6577
Յեկատերինոսովի	325	1867	202	—	—	—	2394
Լուգանակի	322	662	51	—	—	—	1035
Կրեմնենուզի	329	363	148	44	26	367	1277
Մարիուպոլի	20	61	16	50	4	25	176
Ընդամենը 7 աշխ. բորսայում	2824	11,775	1385	252	258	2356	18,849

Այս տվյալները, վոր ներառում են գլխավորապես Ռւկրայինա-  
թի հիմնական արդյունաբերական շրջանների յերիտասարդութան  
գործազրկութունը, վկայում են, վոր 18,849 գործազուրկ ղեռահասի  
ընդհանուր մասսայից ծնող շունեցող և գործազուրկ ու թոշակառու  
ծնող ունեցող ղեռահասաների թիվը աշխատանքի բորսաներում 3,334  
է: Այս թվանշանը, վոր ղեռահասաների ամբողջ գործազուրկ մասսայի  
նկատմամբ հավասար է 17<sup>0</sup>/<sub>10</sub>, ներառում է միայն ամենակարիքավոր  
ղեռահասաների կատեգորիան: Այստեղ չեն մտնում մեծ ընտանիքնե-  
րում ապրող ղեռահասաները և տան միակ կերակրողները:

Գործազուրկ ղեռահասաների նյութական կարիքի այս տազնա-  
պալի յերևութիքը պահանջում է ավելի արագ լուծել գործազրկութան  
համար նպաստ ստացողներին շրջանը լայնացնելու հարցը: Այսինքն,  
յեկակեա ունենալով գործազուրկ ղեռահասաների նյութական կարիքի  
հաշվառումը, անհրաժեշտ է արհմիությունների այն կուրսը, վոր  
նրանք բռնել են գործազրկութունից ապահովածների շրջանը լայ-  
նացնելու նկատմամբ, տարածել նաև յերիտասարդութան վրա:

ԴԵՌԱՀԱՍ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՁՄԱՆ ՅԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԲՐՈՆՅԱՅԻ  
ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՎԵՐԱՀԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Աշխատանքի բորսաներն աշխատանքի շուկայի կարգավորման  
նոր սկզբունքներին անցնելով, հետզհետե լավացնելով աշխատանքի  
միջնորդի իրենց պարտականությունների կատարումը, նշանակալի  
չափով թուլացրին ղեռահասաների վարձման կարգավորման աշխա-  
տանքը:

Այն բանի հետևանքով, վոր բանվորական ուժի վարձումը աշ-  
խատանքի բորսայի միջոցով պարտադիր չէ, ղեռահասաների աշխա-  
տանքի շուկայի կարգավորման գործում մենք ունենք մի շարք ադա-  
ղակող աննորմալություններ: Այդ աննորմալությունները վոչ միայն  
այն են, վոր ղեռահաս բանվորների աշխատանքի բորսաների միջո-  
ցով պարտադրաբար վարձումը խախտվում է, այլև այն, վոր նրանք  
հանգում են հովանավորումների, խնամության և այլն զարգացմանը,  
իսկ սրանք վատացնում են ամենակարիքավոր ղեռահասաների խմբերի  
գրությունը: Վերջինիս հատկապես նպաստում է արհմիությունների  
բռնած գիծը, այն է՝ արտադրության մեջ զբաղել առաջին հերթին  
բանվորների յերեխաներին, վորոնք յերբեմն շատ ավելի լավ նյութա-  
կան պայմաններում են, քան, ասենք, գործազուրկ մենակ-ղեռահասա-  
ները, մանկատների ղեռահասաները և այլն:

Դեռահասաների աշխատանքի շուկան ճիշտ կարգավորելու ամե-  
նագլխավոր և ամենաանհրաժեշտ միջոցներից մեկը հանդիսանում և

այն, վոր մտցվի դեռահասաների պարտադիր վարձում աշխատանքի բորսաների միջոցով: Յեթե լիակատար անհրաժեշտութուն և հրաժարվել (ինչ վոր արդեն արված և ու կենսագործվում է 1925 թվից) հասակավոր բանվորական ուժը պարտադրաբար աշխատանքի բորսայի միջոցով վարձելուց, ապա յերիտասարդության, նրա դեռահաս մասի համար այս միջոցառութունը հարմար չե բոլոր տեսակետներից և առաջին հերթին այն տեսակետից, վոր դեռահասաների աշխատանքը, ընդունվելով վորակյալ բանվորական ուժ նախապատրաստելու համար, միշտ իվիճակի յե բավարարել արդյունաբերության բոլոր ճյուղերի իր նկատմամբ ունեցած անհրաժեշտ պահանջը: Սակայն, չնայած այս բանին, վերջերս դեռահասաների վարձումն աշխատանքի բորսայի միջոցով թեպետև շատանում է, բայց ամենևին չի համապատասխանում դեռահասաների աշխատանքի շուկայի կարգավորման գործին:

Այս տվյալները, վոր վկայում են դեռահասաների աշխատանքի բորսայով ուղարկելու անհրաժեշտ կանոնների տկնիքն խախտումը, հանդիսացան նաև գարգացող խնամության և հովանավորումների փաստ և ամբողջ յեռանդով պահանջում են, վոր սահմանվի դեռահասաների պարտադիր վարձում աշխատանքի բորսաների միջոցով, իսկ այնտեղ, վորտեղ բորսաներ չկան, դեռահասաների արտադրության մեջ ընդունելու կարգավորումը պետք է թողնվի արհմիություններին կոմյերիտմիության մասնակցությունով:

Այս խնդիրը—դեռահասաների պարտադիր վարձման իրականացումն աշխատանքի բորսայի միջոցով—պահանջում է, վոր Աշխտողկոմատի մարմինները և արհմիություններն ալիլի լայն վերահսկողություն հաստատեն: Այդ հաստատումն անհրաժեշտ է, վորովհետև աշխատանքի պրակտիկայում (չնայած որինականացված է դեռահասաների պարտադիր վարձումն աշխատանքի բորսաների միջոցով) առանձին հանրապետություններում որենսդրության իրագործման նշանակալի խախտում գոյություն ունի: ՀամԿԵՄ տնտեսական աշխատողների համաժողովենական անցյալ խորհրդակցության ժամանակ ընկ. Չերնովն այս հաստատելու համար հետևյալ փաստը բերեց. «Մենք Ուկրայինայում անկացրինք այդ (պարտադիր վարձում աշխատանքի բորսաների միջոցով) Ժողովխորհով և հրահանգներ տվեցինք տեղական կազմակերպություններին, վոր դեռահասաները պետք է պարտադրաբար ընտրվեն աշխատանքի բորսաների միջոցով: Բայց հա իմ առաջ ունեմ միքանի թվանշաններ, թե դեռահասաներն ինչպես ընտրվում են առանց աշխատանքի բորսաների: 1926 թ. յերկու յեռամսյակում 41 շրջանում (ոկրուգում) բանվորական ուժի վարձման ժամանակ ընտրության 65,5% յեղել է առանց աշխատանքի բորսաների»:

ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՄԱՆՆԵՐԻ ՈՒՂԱԲԱՆՈՒՄ ԴԵՌԱՀԱՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՔԻՎԸ 1925—26 Ք. 566 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՄԱՆՆԵՐԻ.

1925 Ք.	Ընդունված են անվան մեջ				Ընդունված ասանց արևմտահայերէն բնակիչներ				Ընդունված ասանց արևմտահայերէն բնակիչներ								
	Տրամադրվի	Կառայ	Յերկու սեկց	Գրանցվում ըստ մասերի	Տրամադրվում են	Յերկու սեկց	Կառայ	Յերկու սեկց	Տրամադրվում են	Յերկու սեկց	Կառայ	Յերկու սեկց	Տրամադրվում են				
														Արժեք	Մասեր	Մասեր	Մասեր
1,160	1,362	4,522	231	736	186	200	1,018	51	272	41	2,342	1,162	3,504	180	464	145	
1,852	800	2,682	142	479	276	448	226	674	41	116	136	574	2,008	131	363	140	
1,339	683	2,032	188	367	121	442	234	676	44	108	64	897	459	1,356	144	254	57
1,507	751	2,258	140	446	166	573	322	895	39	94	60	934	429	1,363	101	352	106
1,328	814	2,173	196	368	217	562	438	1,000	75	114	43	766	406	1,172	121	254	174
1,388	575	1,963	188	414	177	585	265	850	69	139	79	803	310	1,113	119	275	98
1,417	563	1,980	320	529	176	583	273	856	131	215	73	884	290	1,124	189	314	103
1,750	519	2,269	634	566	376	584	208	792	163	171	125	1,166	311	1,477	471	385	251
1,475	360	1,835	589	653	242	519	110	629	118	200	69	956	250	1,206	41	453	173
1,449	482	1,931	370	496	193	552	208	766	112	149	47	897	274	1,171	258	347	146
2,978	1,268	4,246	548	566	365	925	529	1,454	105	171	120	2,053	739	2,792	443	362	245
19,673	8,187	27,891	3,256	5,620	2,419	6,691	3,013	9,610	948	1,749	567	13,082	5,204	18,286	2,586	3,883	1,863

ԸՆԴԱՄԱՏՈՒՄ

ՔԻՎԸ ՅԵՎ ԱՄԻՄ

Այս գրութիւնը պահանջում է, վոր Աշխոհակամառի մարմինները և արհեստակցական միութիւններն ավելի խիստ վերահսկողութիւն հաստատեն յերիտասարդութեան արտադրութիւնը գրավելը կարգավորելու վրա: Յերիտասարդութեան գործադրութեան պահանջը, վոր իրակատար իրագործվի բրոնյայի վերաքննած տոկոսն արդշունարերութեան բոլոր ճյուղերում, գործադուրկ յերիտասարդութեան նյութական աշխատանքային ոգնութեան հարցերի յուրաժամանակ լինելու անհրաժեշտութիւնը պահանջում են կոմյերիտմիութիւնից, վոր նա նշանակալի չափով աշխուժացնի ու լավացնի աշխատանքի բորսաներին կից դեռահասաների սեկցիաների աշխատանքը:

Բացի այդ, յերիտասարդութեան գործադրութեան վերացման գործնական լուծումը պահանջում է յեռանդուն գործունեյութիւն նաև ՀամԿՅԵՄ կոմիտեներէից: Կոմյերիտական կոմիտեներն իրենց ամենորոյա աշխատանքում պետք է իրագեկ լինեն Աշխոհակամառի և արհմիութիւններին նշած միջոցառութիւններին գործադրութեան դեմ մղվող պայքարի գործում և իր ժամանակին նրանց առաջադրեն միջոցառութիւններ, վորոնք վերաբերում են յերիտասարդութեան գործադրութեանը:

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՁՐԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ի ուրիս հայտնի յե, վոր մեր միութիւնը մի շարք տարիներէ ընթացքում պայքարում եր ձրի աշակերտութիւն մտցնելու դեմ, բայց յեկել է ժամանակը, յերբ մենք պետք է ավելի լուրջ մտենանք այդ հարցին: Ձե վոր բոլորիս հայտնի յե, վոր և՛ Իվ.Վոզնեսենսկի, և՛ ուրիշ կազմակերպութիւններին մեջ բանվորներն ամենալուրջ ճնշում են գործադրում, վորպեսզի յուրաժամանակ սովորեցնեն բանվորների յերեխաներին: Գործադուրկ պատանեկութեան նշանակալի թիվը պահանջում է միութիւնից ավելի լուրջ վերաբերվել այս հարցին: Մենք, քաղմակողմանի կերպով խորամուխ լինելով այս հարցին, բանաձևում ձրի աշակերտութեան վերաբերող հատուկ կետում գրում ենք հետեւյալը:

«Կոնֆրենցիան ընդառաջելով մեծ ընտանիքներով ծանրաբեռնված բանվորների պահանջներին, արտահայտվում է հոգուտ այն բանի, վոր իրրև բացառութիւն առանձին ուսումներում թույլատրվի բանվորներին յերեխաների ձրի ուսուցումը, յեյակետ ունենալով կենցաղային աշխատանքը և արտադրական հնարավորութիւնները: Միաժամանակ հարկավոր է վճռականապես հասնել այն բանին, վորպեսզի արտադրութեան մեջ ձրի ուսուցման ընդունվող բանվորների յերեխաները բացառապես ոգտագործվեն այն աշխատանքներում, վորոնք ճնարավորութիւն են տալիս ձեռք բերել անհրաժեշտ վորակում:

կոնֆերենցիան վճռականապես դեմ է արտահայտվում այն բանին՝ վոր նրանք ոգտագործվեն վորակում ձեռք բերելու հետ կապ չունեցող ոժանդակ կամ այլ աշխատանքներում: Այն ուսյունները, ուր կարող է թուլատրվել բանվորների յերեխաների ձրի ուսուցում, սահմանվում են համապատասխան կենտրոնական մարմիններից (ՀԱՄԿԹ, ԺՏԳԽ և ՀամԼԿՅԵՄ կենտկոմ)»:

Ձրի աշակերտության իրագործման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է կենտրոնացնել գլխավորապես այն բանի վրա, վորպեսզի սովորելու ուղարկվողները բացառապես բանվորների յերեխաներ լինեն, և վորպեսզի նրանք պարտադրաբար կարողանան ստանալ այս կամ այն վորակումը: Այս առաջին Բացի այս, բանաձևը հիշատակում է այն դրությունը, վորպեսզի ձրի աշակերտության կիրառումը չգործադրվի պատանեկական աշխատանքի շահագործման տեսակետից: Այս նպատակով մենք պետք է համենք այն բանին, վորպեսզի այն աշխատանքներում, վորոնց մեջ անհնար է վորակում ստանալ, դեռահաս բանվորները—բանվորների յերեխաները—չուղարկվեն:

Ձրի աշակերտության և դեռահասների բրոնյայի հարցի վերաբերյալ, կոնֆերենցիայի ընդունած վճիռների հետևանքով, առաջիկա ամիսներում մեր առաջ բացվում է ամենալուրջ և յեռանդուն աշխատանքի մի շրջան:

Հենց յեկակես ունենալով աշխատանքի այս լրջությունը, վոր պահանջում է գործազրկության լիակատար համաձայնեցում արհմիությունների և Աշխժողկոմատի մարմինների հետ, մենք պետք է լավացնենք մեր աշխատանքը գործաբեկումներում և Աշխժողկոմատի մարմիններում: Այստեղ վիճարանությունների ժամանակ մատնանշում էյին, վոր արհմիությունների հետ մեր գործերը շատ անմխիթար վիճակում են: Իհարկե, առանձին թերի բաներ կան, և այդ անխուսափելի յե, բայց այդ թերի բաները մեր աշխատանքի ավելի վորոշ ու ձիշտ հաստման (УСТАНОВКА) և յերիտասարդությանն սպասարկելու ասպարիզում արհմիությունների աշխատանքի լավացման ժամանակ վոշ միայն կթուլանան, այլ և լուծարելի կենթարկվեն: (Մալիանաբաբալովսկի):



ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՅԵՎ  
ՀԱՄԼԿՅԵՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Իսնածեմի քնն. Զավյալովի գեկուցման վերաբերյալ).

I. ՀԱՄԼԿՅԵՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՅՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

1. Սոցիալիստական ռացիոնալացման գլխավոր խնդիրն է՝ արդյունաբերությունյան վերակառուցումը ավելի բարձր տեխնիկական հիմքի վրա, մասսայական արտադրություն անցումը, արտադրության ամբողջ պրոցեսսի մեքենայացումը և հենց դրանով արդյունաբերական պրոդուկցիայի ինքնարժեքի ցածացումը:

Այս խնդիրները պրակտիկ իրականացումը տանում է դեպի բանվոր դասակարգի դրություն հետագա լավացումը և վճռական նշանակություն ունի ԽՍՀՄ սոցիալիզմի շինարարության գործում:

ՀամԼԿՅԵՄ հիմնական խնդիրներն արտադրություն սոցիալիստական ռացիոնալացմանը մասնակցելու գործում այն են, վոր ամենորայ ոգնություն ցույց տա կուսակցությանն ու տնտեսական մարմիններին արտադրության տեխնիկայի և կազմակերպության լավացման գործում, բանվոր յերիտասարդության լայն մասսաներին պարզաբանի կուսակցության անցկացրած մրջոցառությունները, բանվոր յերիտասարդության ու միություն անդամները ակտիվությունը և նախածեռնությունը կազմակերպի ամենորայ շինարարական-տնտեսական աշխատանքին մասնակցելու գծով:

ՀամԼԿՅԵՄ ամեն կերպ ծավալելով վորակյալ բանվորական ուժի վերարտադրության աշխատանքը, բավարարելով բանվոր յերիտասարդության կուլտուրական պահանջները և պաշտպանելով տնտեսական շահերը, պետք է իր ուշադրության կենտրոնը վարձնի արտադրության տեխնիկայի ու կազմակերպության լավացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման գործը:

2. Արդյունաբերությունյան վերակազմությունյան, արտադրության տեխնիկայի ու կազմակերպության լավացման հետևանքով արդյունաբերության մեջ զբաղված բանվորական ուժի մի մասը կազատվի: Ազատվող բանվորական ուժի վերախմբավորումը և տեղափոխումներն արդյունաբերության ներսում անխուսափելիորեն կտարածվեն նաև բանվոր յերիտասարդության վրա: Սակայն պրոլետարական պետության

կողմից կատարվող արտադրութեան սոցիալիստական ռացիոնալացումը չի նշանակում բանվորների թվի քչացում, այլ ընդհակառակը, ամբողջութեամբ առած ապահովում է բանվոր դասակարգի թվի հետագա աճումը և նրա նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը, զրա թվում նաև բանվոր յերիտասարդութեան:

Յնչնեղով սրանից, կոնֆերենցիան համարում է, Վոր հետագայում ել միութեան ուշադրութեանը պետք է ուղղված լինի բանվոր յերիտասարդութեան դրութեան լավացման, պատանեկական աշխատանքի տնտեսական արժեքի բարձրացման, յերիտասարդութեանն ազնիլի լայն չափով արտադրութեան մեջ գրավելու վրա:

3. ՀամԼԿՅՑՄ ակտիվութեան ու յեռանդի մաքսիմալ գործադրութեանը պետք է ընթանա այս գծով.

ա. ոչնեղ կուսակցութեանը ռացիոնալացումն իրագործելու և պայքարելու արդյունաբերութեան վերակառուցման, տեխնիկայի լավացման և արտադրութեան կազմակերպութեան նկատմամբ պահպանողական տրամադրութեանները ղեմ.

բ. պատանեկական աշխատանքի սոցիալիստական կազմակերպութեանը լայնացնել, պահելով նրա ուսումնա-արտադրական ընդլթր: Սոցիալիստական ռացիոնալացումը վոչ մի ղեպքում չի հակասում պատանեկական աշխատանքի սոցիալիստական կազմակերպութեան սկզբունքներին, ընդհակառակը, նա յենթադրում է բանվորական ուժի նախապատրաստման այնպիսի սիստեմ, վորն ապահովեր ամեն մի բանվորի գիտակից ու ակտիվ մասնակցութեանը շինարարութեանն ընդհանրապես և կոնկրետ արտադրական աշխատանքին մասնավորապես.

գ. Ֆարբիկա-գործարանային աշակերտութեան (ֆարգավուչի) զըպրոցները վերակառուցել արդյունաբերութեան և մասսայական մեքենայական արտադրութեան պահանջներին համապատասխան: Արտադրութեան ռացիոնալացման իրագործման առաջին արդյունքներն ասում են, վոր բանվորական ուժի նկատմամբ տեղի յե ունենում յերկու տեսակի պրոցեսս: Մի կողմից՝ արհեստային վորակման մի շարք արհեստներ ու մասնագիտութեաններ վոչնչանում են, մյուս կողմից՝ տեղի յե ունենում մասսայական արհեստների հարթաչափումը (նիվելլիրովկան), այսինքն՝ քչանում է ստորին և բարձր կատեգորիաների զանազանութեանը: Բարձր զարգացած մեքենային արտադրութեան ժամանակ ձևավորվում է նոր տիպ, վորի վորակումը, վորոշ արտադրական ունակութեաններ ձեռք բերելու կողքին, վորոշվում է նաև մասնագիտական ու ընդհանուր թեորիական գիտելիքների մինիմումի անհրաժեշտութեամբ:

Կոնֆերենցիան հանձնարարում է կենտկոմին ֆարգավուչի զըպ-

րոցները վերակազմվող արդյունաբերութեան պահանջներին հարմարեցնելու հարցը առանձնապես մշակել.

դ) սակայն Ֆարգավուչի դպրոցների վերակառուցումը Հպետք և կրճատի պրոֆտեսիսիկական կրթութեան ցանցը կամ Ֆարգավուչի դըպրոցների տեղը դնի արտադրութեան պահանջներին չհամապատասխանող նախապատրաստման այլ ձևեր, վորոնք տալիս են աշխատանքի նեղ արտադրական ունակութեաններ միայն:

4. Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան ամրացումը և զարգացումն ավելի բարձր պահանջներ և ներկայացնում աշխատողներին նոր կադրին, հատկապես մասնագիտական և ընդհանուր թերթական նախապատրաստման տեսակետից: ՀամԼԿՅԵՄ, յեղնելով սրանից, պետք և ուժեղացնի իր մասնակցութեանը տարրական և պրոֆտեսիսիկական դպրոցի (յոթնամյակի, իննամյակի) շինարարութեանը, նպաստի նրանց զարգացմանը, ժողովրդական կրթութեան սխտեմը հարմարեցնելով ամբողջ ժողովրդական տնտեսութեան պահանջներին: Կոնֆերենցիան ընդունում և, վոր ժամանակն և ՀամԿԿ (բ) Կենտկոմին կից ժողովրդական լուսավորութեան սխտեմի հարցերի վերաբերյալ կուսակցական խորհրդակցութեան հրավիրել և հանձնարարում և ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին այդ ուղղութեամբ անհրաժեշտ միջոցառութեանները ղեկավարել:

5. Կոնֆերենցիան անհրաժեշտ և համարում դեռահասների բրոնյայի գործող նորմերի վերաքննութեանը, մաքսիմալ Հպիով այդ նորմերն արդյունաբերութեան փաստական պահանջի հետ կապելու նպատակով, վորի համար բրոնյայի գործող տոկոսը հաշվել միայն վորակյալ բանվորների նկատմամբ:

Կոնֆերենցիան համարում և, վոր դեռահասների նոր սահմանվող բրոնյան պետք և ղիտվի իբրև Ֆարգավուչի դպրոցների, բրիգադային աշակերտութեան և այլն ուսուցումն անցած աշակերտների միխիմալ քանակ, վոր պահանջվում և վորակյալ բանվորական ուժի վերականգնման նորմալ պրոցեսի համար: Բրոնյան լրացնելու ժամանակ հարկավոր և գերադասութեան տալ բանվորների յերեխաներին: Կոնֆերենցիան միութեան տեղական կազմակերպութեաններ և Կենտկոմի հատուկ ուշադրութեանն և դարձնում այն բանի վրա, վոր անհրաժեշտ և կենսագործել ՀամԿԿ (բ) Կենտկոմի այն վորոշումը, վոր ընթացիկ տարում փաստապես ձեռնարկութեաններում զբաղված դեռահասների քանակը չըջացվի Կոնֆերենցիան հանձնարարում և Կենտկոմին մասնակցել բրոնյայի գոյութեան ունեցող նորմերի վերաքննութեանը և շուտափույթ կարգով մշակել 1927 թ. Ֆարգավուչի դպրոցների ընդունելութեան հարցը:

## II. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Չնայած այն մի շարք նվաճումներին, վոր արել ե չամԼԿՅԼՄ յերիտասարդութեան արտադրական կյանքին մասնակցելը կազմակերպելու աշխատանքում, այնուամենայնիվ կոնֆերենցիան այս ասպարիզի աշխատանքը համարում ե անբավարար և դեռ միութեան ամենորոյս աշխատանքը չգարձած: Այս նշանակալի չափով բացատրվում ե այն բանով, վոր այս ասպարիզում միութեան կոմիտեներէրի ղեկավարութեանը ըջիջներէ աշխատանքի բովանդակութեան նկատմամբ բավականաչափ կոնկրետ չի յեղել, իսկ տնտեսական ու արհեստակցական կազմակերպութեանները դեռ բավականաչափ ուշադիր չեն յերիտասարդութեանը արտադրութեան ռացիոնալացման գործի մեջ գրավելու ասպարիզում: Կոմյերիտմիութեան աշխատանքն արտադրական խորհրդակցութեաններում, վորոնք հանդիսանում են լավագոյն ձևը ըայն մասսաներին խորհրդային տնտեսութեան գործնական շինարարութեան գործի մեջ բաշելու և նրանց մեջ այն գիտակցութեանը դաստիարակելու, թե աշխատավորներէ շահերը սերտ կախմած են սոցիալիստական պետութեան տնտեսական հաջողութեաններէ աստիճանից» (XIV կուսհամագումարի բանաձևից),—պետք ե յերիտասարդութեան մասսաների արտադրական դասակարգային դաստիարակութեան հիմնական կենտրոնը և արտադրական կյանքին մասնակցութեան գրավելու հիմնական ձևը լինի:

1. Կոնֆերենցիան առաջարկում ե արտադրական խորհրդակցութեանները կոնկրետ փաստերով ավելի շատ ու ավելի լավ ժողովրդականացնել յերիտասարդութեան մեջ, մասնավորապես ավելի շատ, քան մինչև այսօր, հարկավոր ե ոգտագործել պատի լրագրերը, ակմբային յերեկույթները և այլն, արտադրական խորհրդակցութեաններէ պուպագանդը մտցնելով մասսայական կուլտաշխատանքի սիստեմի մեջ:

Կոմյերիտականներէ և անկուսակցական յերիտասարդութեան ըայն մասսաներն արտադրական խորհրդակցութեաններէ աշխատանքի մեջ գրավելով, անհրաժեշտ ե խորհրդակցութեան մեջ աշխատանքի կազմակերպութեան և յերիտասարդութեան արտադրական կյանքին մասնակցելու մասին կոնկրետ առաջարկներ մտցնել, վորոնք պետք ե նախորդք մշակված լինեն բաժանմունքներում (ցեխերում), բանվոր յերիտասարդութեան ժողովներում և չամԼԿՅԼՄ ըջիջներում: Անհրաժեշտ ե հասնել այն բանին, վոր արմիութեանները և տնտեսական մարմիններն այդ հարցերը մտցնեն խորհրդակցութեաններէ ձրագրի մեջ և ավելացնեն ուշադրութեանը դեպի այդ հարցերը:

2. Արտադրական խորհրդակցութեաններին կից յերիտասարդու-

թյան առանձին խմբակներ ու սեկցիաներ ստեղծելը, վոր տեղի յե ունեցել առանձին կազմակերպություններում. կոնֆերենցիան աննպատակահարմար և գտնում իբրև յերիտասարդությունն ընդհանուր արտադրական կյանքին մասնակցելուց առանձնացնող մի յերևույթ, սակայն, սրա կողքին, անհրաժեշտ և խրախուսել բանվոր յերիտասարդության առանձին կամավոր միացումների նախաձեռնությունը և աշխատանքն արտադրության մեջ, ակնբուժ, կարմիր անկյունում և այլն, այն միացումների, վորոնք իրենց խնդիր են առաջադրում աջակցել արտադրության ռացիոնալացմանը:

3. Կոնֆերենցիան հատուկ ուշադրություն և հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ և միության պաշտպանությունը և մասնակցությունն այն ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներին, վորոնք իբրև փորձ կազմակերպվում են առանձին ձեռնարկություններում:

4. Աշխատանքից բացակայելու դեմ պայքարելու խնդիրը և յերիտասարդության մեջ դեպի դադարահաները, նյութերը և գործիքները հողատար վերաբերմունք դաստիարակելու խնդիրն առաջվա պես զըրված և կոմյերիտմիության առաջ, Անհրաժեշտ և ամենազանազան ձևերով, հիմնված բանվոր յերիտասարդության նախաձեռնության ու ինքնագործունեյության վրա (լավագույն արտադրական աշխատողի մրցությունների, արտադրական դատերի, պատի լրագրի, ժողովներին ու կոնֆերենցիաներին և այլն միջոցով), զիտակից վերաբերմունք դաստիարակել դեպի արտադրությունը: Կոմյերիտակները պետք և առաջին հերթին դեպի արտադրությունն ունենալիք զիտակից վերաբերմունքին անձնական որինակ տան և ամենորոյա ագիտատորներ, պրոպագանդիստներ և կազմակերպիչներ լինեն, վոր մնացած յերիտասարդությունն և նույնպիսի վերաբերմունք ունենա դեպի արտադրությունը:

5. Աշխատանքի ձևերի ու մեթոդների հարմարեցումը բանվոր յերիտասարդության առանձին հասակային ու ալտադրական խմբակներին պետք և ընթանա այն ճանապարհով, վոր նրանց աշխատանքի հետևյալ ձևերի մեջ գրավեն.

I. Ֆարքիկա-գործարանային առակերտւթյան (Ֆարքավուչի) գարոցների առակերտներ յիվ անհասական-բրիգադային (խմբական) առակերտւթուց.

ա) Ֆարքավուչի դպրոցին կից արտադրական խորհրդակցության կազմակերպում. բ) արտադրական տոներ ու յերեկույթներ. գ) երևուրսիաներ դեպի ֆարքիկաները, գործարանները և թանգարանները. դ) իրենց աշխատանքներով արտադրական ցուցահանդեսներին մասնակցելը. ե) զիտական-տեխնիկական խըմ-

բակնների կազմապերպում. զ) լավագույն աշակերտի մրցություն-  
ների կազմակերպում (կոնկուրսների). է) պատի լրագրին մաս-  
նակցելը և այլն:

## II. Վտակալ յերեսասարգ բանվորներ.

ա) նրանց գրավումը արտադրական խորհրդակցություննե-  
րի ու հանձնաժողովների մեջ. բ) նրանց գրավումը բանվորական  
կիրակնորյա դպրոցները, բանվորական կիրակնորյա համալսա-  
րանները, արհ-տեխնիկումները, արտադրական ու գիտական-տեխ-  
նիկական խմբերը. գ) լավագույն բանվորի մրցությունների կազ-  
մակերպում (կոնկուրսների). դ) տեխնիկական հարցերի վերաբե-  
րյալ կոնսուլտացիաների (խորհրդատվությունների) ոգտադրում. ե)  
վորակման առանձին տեսակների (ճախարակագործների, սի-  
կանագործների և այլն) վերաբերյալ ինժեներների հետ խորհրդա-  
կցությունների կազմակերպում. զ) արտադրական խորհրդակցու-  
թյուններին կից վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքի մաս-  
նակցություն. է) տնտեսական աշխատանքի և բրիգադիրների  
զասնրթացների համար առանջ քաշելը և այլն:

## III. Ոժանգակ բանվորներ.

ա) Ոգնություն վորակում ձեռք բերելու ղեկավարում (բանվո-  
րական կիրակնորյա դպրոցներին, արհտեխնիկոսների միջոցով).  
բ) աղուժներին կից տեխնիկական խմբերի մեջ գրավելը. գ) լայն  
պարզաբանող աշխատանքի կատարում արտադրական պրոցեսս-  
ների և արտադրական կարգապահության մասին և այլն:

6. Կոնֆերենցիան միության և տեղական կազմակերպություննե-  
րի ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է  
ամեն կերպ խրախուսել ու զարգացնել յերիտասարդության գյուտա-  
բարությունը: Աննպատակահարմար գտնելով յերիտասարդ գյուտարա-  
րների առանձին կազմակերպությունների ստեղծումը, կոնֆերենցիան  
հանձնարարում է ՀամվԿՅԵՄ Կենտկոմին միջոցներ ձեռք առնել ու յե-  
րիտասարդությունը գրավել գյուտարարների ընդհանուր կազմակե-  
րպությունները և այնտեղ աշխատանքը կարգի զցել նրանց հետ:

ԺՏԳԽ կից գյուտարարության ավակցող բյուրոն պետք է նշե  
մի շարք միջոցառություններ յերիտասարդ գյուտարարների հետ աշ-  
խատելու վերաբերյալ:

7. Հին «վարպետականության» մնացորդների նկատվող արտա-  
հայտությունների կապակցությամբ, մնացորդներ, վորոնք արտահայտ-  
վում են սովորեցնող բանվորների աննորմալ վերաբերմունքում զեպի  
աշակերտները (աշակերտներին ծաղրի յենթարկելը, մաղարիչ պահան-  
ջելը և այլն), կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում վճռական պայ-

քար մղել այդ յերևույթներէ դեմ, իբրև կապիտալիստական գործարանի ֆիասակար մնացորդներէ:

Միաժամանակ կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում վճարական պես հասնել այն բանին, վոր աշակերտները նորմալ վերաբերմունք ունենան դեպի հին բանվորները և վարպետները:

Տ. Անհրաժեշտ է աշխատանք կատարել հասակավոր վորակյալ ու հասարակականորեն ակախի բանվոր յերիտասարդութիւնն առաջ քաշելու տնտեսական աշխատանքի համար. ՀամԼԿՅԵՄ՝ քՂիջները պետք է հաշվառքի յենթարկեն այդպիսի բանվորներին և աջակցեն նրանց իրենց աշխատանքում: Անհրաժեշտ է, վոր միութեան կոմիտեները յերիտասարդ առաջ քաշվողներէ խորհրդակցութիւններ գումարեն:

### III. ՊՐՈՅԵՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ՅԵՎ ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՎԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՄԻՆ ԱՇԽԱՏԵԿՈՒ ՄԱՍԻՆ.

Կոնֆերենցիան տեղական կազմակերպութիւններէ ուշադրութիւնն է հրավերում ՀամԼԿՅԵՄ՝ VII համագումարի այն վորոշումներէ թույլ կատարման վրա, վորոնք վերաբերում են մասնագետներէ հետեւազ հաստատելուն, և առաջարկում է ուժեղացնել ինժեներներէ, վարպետներէ և տեխնիկներէ զբաղումը՝

ա. շինարարութեան հարցերի մշակման և բանվորական կրթութեան բոլոր տեսակներէ աշխատանքի լավացման մեջ (ֆարգավուչ, բանվորական կիրակնորյա դպրոցներ, արհմեխկուրսեր):

բ. արտադրական և գիտական-տեխնիկական խմբերի կազմակերպման և ղեկավարման մեջ.

գ. բանվոր յերիտասարդութեան և ՀամԼԿՅԵՄ՝ քՂիջներէ ժողովներում և կոնֆերենցիաներում արտադրական-տնտեսական թեմաներէ մասին դասախոսութիւններ, ղեկուցումներ կազմակերպելու մեջ.

դ. բանվոր յերիտասարդութեան համար տեխնիկական ինքնակըրթութիւնն և տեխնիկական խորհրդատվութիւնն (կոնսուլտացիա) կազմակերպելու մեջ:

Մասնագետներին կոմյերիտականներէ հետ միատեղ աշխատանքի գրավելու պայմաններէ մեկը մասնագիտակերութեան նկատվող յերևույթի և յերիտասարդութեան ու մասնագետներէ աննորմալ փոխհարաբերութիւններէ վերացումն է:

Կոնֆերենցիան արտահայտվում է ուայոնական մասշտաբի կամավոր միացումներ կազմակերպելու ոգտին, վորոնք պետք է արհեստակցական-տեխնիկական գիտելիքներէ համար պրոպագանդ անեն միութեան ղեկավարութեամբ: Կոնֆերենցիան հանձնարարում է կենտկոմին մշակել այն հարցը, թե արդյոք նպատակահարմար է այս հարցերէ վեր սրբրյալ բանվոր յերիտասարդութեան համար ժուրնալ հրատարակել:

IV. ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

1. VII համագումարի ժամանակից ի վեր արհկրթութեան վերաբերյալ աշխատանքն ընթանում եր այն նշանի տակ, վոր ամեն կերպ պրոֆտեխնիկական կրթութեան զանազան կետերը մոտեցվեն արդյունաբերութեան կարիքներին ու պահանջներին և բանվոր յերիտասարդութեան հարցերին (վորակման բարձրացում):

Ֆարգավուչի դպրոցների և արհկուրսերի ցանցի հետագա զարգացումը նշանակալի չափով կախված է նույնպես և այն խնայողութեանից, վոր կստացվի դպրոցների ու ցերեխանոցների և հեծանացման հետեւմանքով: ՀամԼԿՅԵՄ ձգտելով ֆարգավուչի դպրոցները և արհտեխնիկական կրթութեան այլ տեսակների ցանցի հետագա լայնացմանը և ամրացմանը, պետք է հատուկ ուշադրութեան դարձնի ուսուցման բոլոր ձևերի հետագա հեծանացման, աշակերտների աշխատանքի արտադրողականութեան բարձրացման և մեծացման վրա, նրանց շահագրգռելով արտադրութեան հետագա զարգացումով:

2. Այն բանի հետևանքով, վոր ֆարգավուչի դպրոցներն ավարտողներին արտադրութեան մեջ տեղավորելու ժամանակ մեծ դժվարութեաններ են հանդիպում, վորոնք արտահայտվում են ֆարգավուչի շրջանավարտ-աշակերտների արդյունաբերութեան պահանջներին հարմարված չլինելու և առանց ֆարգավուչիներին շրջանավարտներին հաշվառելու, բանվորներ ընդունելու մեջ, անհրաժեշտ է մեծացնել տնտեսական մարմինների պատասխանատվութեանն աշակերտներին, նրանց ստացած վորակման համապատասխան, յուրաժամանակ աշխատանք տալու գործում: Այս նպատակով կոնֆիբրենցիան հանձնարարում է կենտրոններն մշակել ֆարբրիկա-գործարանային աշակերտութեան տարեկան յերկու անգամ ընդունման և ավարտման սխտեմին անցնելու հարցը: Դեռահասներին բրոնյայից և ֆարգավուչի դպրոցներից յուրաժամանակ ինքնուրույն աշխատանքի փոխադրելու համար անհրաժեշտ է հասնել այն բանին, վոր ձեռնարկութեանները նախորդ (ուսուցման ժամկետը վերջանալուց 2—3 ամիս առաջ) նրանց ինքնուրույն աշխատանքի դնեն արտադրութեան մեջ, համապատասխան ուղղում մտցնելով որեւէ քի մեջ:

3. Անհատական-բրիգադային աշակերտութեան աշակերտների թերեւորեկական ուսուցման կիրառման փորձն ընդգծուեւ է, վոր այդ նրանց համար մտցնելը ձիշտ է: Այս նպատակով անհրաժեշտ է հասնել այն բանին, վոր շատ զարգանա արհետակցական-տեխնիկական դասընթացների, բանվորական յերեկոյան դպրոցների ցանցը, և հատուկ դասընթացներ ստեղծվեն ֆարգավուչի դպրոցներին կից:



4. Նկատի ունենալով այն բանը, վոր ֆարզավուչի զպրոցներին շանակութունը ոսցիտնալացման հետևանքով մեծանում է, կոնֆերենցիան տեղական կազմակերպութուններին ուշադրութունն է հրավիրում կոմյերիտմիութեան VII համագումարի այն վորոշումների ավելի վճռական իրագործման անհրաժեշտութեան վրա, վորոնք վերաբերում են ֆարզավուչի զպրոցներին բարձր տեխնիկական սարքավորմանը:

5. Արդունարեբութեան հիմնական շինարարութեան վորակյալ բանվորական ազան շինարարական մասնազիտութուններին վորակյալ բանվորական ուժի բարձր պահանջ է ներկայացնում աշխատանքի շուկային: Կոնֆերենցիան տեղական կազմակերպութուններին է համապատասխան տնտեսական մարմինների հատուկ ուշադրութունն է հրավիրում շինարարական գործի բանվորական ուժի նախապատրաստումն ուժեղացնելու վրա: Սրա համար անհրաժեշտ է ծավալել համապատասխան արտեխնիկական զպրոցներին ու դասընթացներին ստեղծման աշխատանք, նրանց կազմը լրացնելով, առաջին հերթին, բանվորների գործազուրկ յերեխաներից և աշխատանքի բորսայում գրանցված պատանիներից (переростки):

6. Կոնֆերենցիան, ընդառաջելով բանվորներին առանձին խմբակների պահանջներին, արտահայտում է, իբրև բացառութիւն, առանձին ուսումնարանում բանվորների յերեխաներին ձրի ուսուցում թույլատրելու ոգտին, յեւնելով կենցաղային պայմաններից և արտադրական նարավորութուններից: Միաժամանակ հարկավոր է վճռականապես հասնել այն բանին, վորպետիկ արտադրութեան մեջ ձրի ուսուցման անցած բանվորներին յերեխաները բացառապես ոգտագործվեն այն աշխատանքներում, վորոնք հնարավորութիւն են տալիս անհրաժեշտ վորակում ձեռք բերել: Կոնֆերենցիան վճռականապես դեմ է արտահայտվում այն բանին, վոր նրանք ոգտագործվեն վորակում ձեռք բերելու հետ կապ չունեցող ոժանդակ կամ այլ աշխատանքներում: Այն ուսումնարանները, վորտեղ կարող է թույլատրվել բանվորներին յերեխաներին ձրի ուսուցումը, պայմաններն էլ սահմանվում են համապատասխան մարմիններին կողմից (ՀԱՄԿԽ, ժՏԳԽ և ՀամԿՅԵՄ Կենտկոմ):

V. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅԲԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՐԱՎՈՒՄՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Չնայած յերկրի արդունաբերութեան ու ամբողջ ժողովրդական տնտեսութեան աճումին և սրա հետևանքով դեռահասաների թվի մեծացմանն արտադրութեան մեջ, յերիտասարդութեան գործազրկութիւնը չի քչանում և պահում է իր տեղական բնույթը քաղաքների աճման և բանվորների յերեխաներին նոր սերնդի հասունացման հետևանքով:

Հաշվի առնելով այն, վոր միայն բրոնյայով կամ գերբրոնյայով հնարավոր չի մատակայում վոչնչացնել գործադրելությանը, կոնֆերենցիան անհրաժեշտ և համարում ավելի մեծ ուշադրություն կենարոնացնել գործադրել յերիտասարդության աշխատանքային ու նյութական ոգնության կազմակերպման վրա:

Կոնֆերենցիան նշում և տեղական կազմակերպությունների այս ուղղությամբ կատարած աշխատանքի անբավարար լինելը և հասարակական ուշադրությունը գործադրելության դեմ մղվող պայքարի մեջ գրավելու թուլությունը և անհրաժեշտ և համարում:

1. Ուսեղացնել VII համագումարի վճիռների իրականացման աշխատանքը յերիտասարդությունն արտադրության և տնայնագործական արդյունաբերության մեջ հաստատելու նկատմամբ, ընդամին ձգտելով մեծացնել գերբրոնյայով արտադրություն ուղարկվողների թիվն այն ճանապարհով, վոր սոցապի մարմինները շատացնեն գերբրոնյայի իրագործմանը հատկացված դրամական միջոցները: Յեղած միջոցներ լիակատար ոգտագործման և ավագ հասակի սովորող դեռահասների ու պատանիների թիվը գերբրոնյայով լայնացնելու հաշվին յերիտասարդությունն արտադրության մեջ ավելի շատ հաստատելու նպատակով, տնտեսական մարմինների հետ պայմանագրեր կնքելիս հնարավոր համարել ուսուցման ժամկետը վերջանալուց հետո պարտադիր չհաշվել ուսուցումը վերջացրած աշակերտների տեղավորումը արտադրության մեջ:

2. Կարգի գցել պատանիներին բրոնյայից ավելի վճռականորեն հանելը, հասնելով այն բանին, վոր հավաքական պայմանագրի միջոցով սահմանվի պատանիների բրոնյայից պարտադրաբար հանելու և ինքնուրույն աշխատանքի դնելու ժամկետ, պարտադրաբար նրանց ամբացնելով արտադրությանը: Ավելի վճռական միջոցներ ձեռք առնելով արտադրության մեջ նոր ընդունվող դեռահասների հասակային կազմը կարգավորելու համար, հասնել այն բանին, վոր արտադրություն ուղարկվեն այնպիսի հասակ ունեցողներ, վորոնք 18 տարեկան դառնալով վերջացնեն ուսուցման ժամկետը:

3. Հասնել այն բանին, վոր կառավարական մարմինների զծով դրամական միջոցներ հատկացվեն յերիտասարդության աշխատանքային կոլլեկտիվների ցանցի լայնացմանը, վորոնցում, նյութական ու աշխատանքային ոգնություն ցույց տրվելու կողքին, աշխատողները սովորեցին նաև վորակման սկզբնական ունակությունները: Ավելի յեռանգով գրավել ավագ հասակի դեռահասներին (և հատկապես պատանիներին) գործադրել բանվորների ընդհանուր արտադրական և աշխատանքային կոլլեկտիվները:

4. Այս միջոցառությունները կատարելու կողքին հարկավոր և

ուշադրութիւն դարձնել աշխատանքի բորսայի աշխատանքի ուժեղացման վրա, ինչպէս զեռահասաների աշխատանքի պահանջի ակտիվ հայտնաբերման ասպարիզում, այնպես ել աշխատանքային միջնորդութեամբ սպասարկելու ասպարիզում, պահելով զեռահասաներին պարտազրաբար աշխատանքի բորսայի միջոցով վարձելու սկզբունքը: Համ. ԼԿՅԵՄ կազմակերպութիւնները պետք է հատուկ ուշադրութիւն դարձնեն հովանավորումների ու խնամութեան դեմ մղվող կովում արմիութիւններին Աշխտողկոմատի մարմիններին աջակցելու վրա:

5. Անհրաժեշտ է ամեն կերպ ձգտել այն բանին, վոր ավելի լայն չափով արտադրութեան մեջ զբաղվեն բանվորների զավակ ավագ հասակի զեռահասաները (17—18 տարեկան) և պատանիները, ինչպէս իբրև ոժանդակ բանվորներ, այնպես ել տեական նախապատրաստութիւն և բարդ վորակում չպահանջող աշխատանքների համար:

#### VI. ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ.

Կոնֆերենցիան հանձնարարում է Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմին.

1. Մասնակցել ՀԱՄԿՍ աշխատանքներին տարիֆային ռեֆորմի անցկացնելու գործում, ընդամին հարկավոր է զեկավարվել այն բանով, վոր անհրաժեշտ է պահել յերիտասարդութեան աշխատավարձի իրական մակարդակը, 4—6-ժամյա բանվորական որվա համար աշխատանքը վարձատրել այնպես, ինչպէս լրիվ 8-ժամյա որվա համար, և յերիտասարդութեան աշխատավարձը բարձրացնել արտադրութեան անտեսական հնարավորութիւններ և աշխատանքի արտադրողականութեան բարձրացման համապատասխան:

2. ՀԱՄԿՍ զծով մշակել գործնական ցուցումներ, վոր աշակերտների և զեռահասաների գործավարձով աշխատելու թույլտվութիւնը լայնացվի, սակայն այդ չպետք է անդրադառնա նրանց անհրաժեշտ վորակում ձեռք բերելու վրա:

3. Բանվոր յերիտասարդութեան բյուջեն ռացիոնալ կերպով ոգտագործելու նպատակով կոմյերիտական կազմակերպութիւնները պետք է այդ ուղղութեամբ մի շարք միջոցներ նշեն, վորի համար պետք է մեծ մասնակցութիւն ունենան կոոպերացիայի աշխատանքին, մանրածախ գների իջեցման գործին և այլն: Կոնֆերենցիան Կենտկոմի ուշադրութիւնն է դարձնում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է այս հարցի վերաբերյալ կոնկրետ ցուցումներ մշակել տեղական կազմակերպութիւններ համար:

#### VII. ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

1. Աշխատանքի ասսիստենտների և տեսուչների աշխատանքը կարգավորելու և ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ է ամենից

ավելի պատրաստված ընկերներին աստիտեմտ ընտրելու և ըստ հնարավորութեան նրանց թիվը շատացնելու միջոցով հասնել այն բանին, վոր զարգանա վոչ միայն դեռահասների համար արտադրութեան մեջ բրոնյա սեղծելու, այլև նրանց հակասանիտարական և հակաառողջապահական պայմաններից և աշխատանքի պաշտպանութեան որինսդրական նորմերի խախտումից պաշտպանելու աշխատանքը (բանվորական որ, տաք և վնասակար համքարութեանները (ցեխբը) չթողնելը):

2. Բանվոր յերիտասարդութեան առողջութեան հետագա լավացման նպատակով անհրաժեշտ ե գիմել հետեյալ միջոցներին. ա) բանվորներին կուրորտներ և սանատորիաներ ուղարկելու ժամանակ անհրաժեշտ ե դեռահասների համար զատել տեղերի վորոշ տոկոսը: Հարկավոր ե ուշադրութեան դարձնել կոմյերիտմիութեան աշխատանքի լավացման վրա սոցապի և առողջապահութեան որգաններում և վերջիններիս աշխատանքի լավացման վրա՝ բանվոր յերիտասարդութեան առողջացման ասպարիդում. բ) լայն և կազմակերպված ձևով ծավալել առաջիկա ամառային կազդուրման կամպանիան, հանգստի գաղութների և յերիտասարդութեան ճամբարների կազմակերպութեանը:

3. Անհրաժեշտ ե ամեն կերպ խրախուսել յերիտասարդութեան նախաձեռնութեանն իր կենսական պայմանների լավացման նկատմամբ հավաքական բնակարանների կազմակերպման, գոյութեան ունեցողների լավացման և նոր հանրակացարանների ու գիշերելու տների կազմակերպութեան միջոցով:

Կոնֆերենցիան ներկա պայմաններում հատուկ նշանակութեանն ե տալիս այն բանին, վոր ձեռնարկութեաններում կոմյերիտմիութեան մասսայական տնտեսական աշխատանքը ծավալվի և լավանա: Կոնֆերենցիան համարում ե, վոր ձեռնարկութեանների մասսայական աշխատանքում հիմնական գիծը պետք ե այն լինի, վոր բանվոր յերիտասարդութեանը ավելի լայն և յուրաժամանակ ծանոթացվի աշխատանքի և կրթութեան այն հարցերին, վորոնք լուծվում են կոմյերիտմիութեաններում, արհմիութեաններում և Աշխտողկոմատում, և ակտիվ կերպով առաջ քաշվի այդ հարցերի իրադործման համար:



## Յ Ա Ն Կ


### Յրատարարաց սոցիալիստական ուսուցիչներու մը յեկ շամկիցի սեփականաց աշխատանքի խնդիրները

Միութեան տնտեսական աշխատանքի նշանակութեան մասին	3
Չպետք է թուլացնել ուշադրութեամբ բանվոր յերիտասարդութեան աշխատանքի և կրթութեան հարցերի վերաբերյալ	5
Շամկիցի հիմնական խնդիրները սոցիալիստական ուսուցիչներու շրջանում	8
Արհեստակցական-տեխնիկական կրթութեամբ կազմած արտադրութեան ուսուցիչներու շրջանում հետ	11
Բանվորները ուժի վերարտադրութեան և արտադրութեան մեջ դեռահասաների բրոնյայի մասին	17
Բանվոր յերիտասարդութեան աշխատավարձի մասին	25
Հատուկ տարիֆային աշակերտական ցանցի մասին	29
Շամկիցի և բանվոր յերիտասարդութեան արտադրական կյանքին մասնակցելու մասին	31
Շամկիցի աշխատանքն արտադրական խորհրդակցութեաններում և մասնագետներին հետ	35
Պէտք են, թէ պետք չեն լավագույն արտադրական աշխատողի մրցութեանները	38
Հասակավոր բանվորներին փորձի ոգտադործման և հին վարպետականութեան դեմ պայքարելու մասին	41
Մասնագետներին հետ միասին աշխատելու և աշխատանքը յերիտասարդութեան խմբակներին արտադրական ու հասակի առանձնահատկութեաններին հարմարեցնելու մասին	43
<b>Տեղափոխման խոսք</b>	
Յերիտասարդութեան գործազրկութեան և նրա դեմ պայքարելու միջոցների մասին	47
Դեռահասաների գործազրկութեան բնույթի և աշխատանքի շուկայի մասին	50
Գործազուրկ դեռահասաների աշխատանքային ու նյութական ոգնութեան մասին	54

Դեռահաս բանվորների վարձման և դեռահասների բրոնյայի նորմերի կատարմանը վերահսկելու մասին . . . . .	57
Բանվորների յերեխաների ձրի ուսուցման մասին . . . . .	60

**Յեթասարդուքյան տրադրական կյանքին մասնակցելու յիվ Համ-  
ԼԿՅԵՄ ճեհեսական աշխատանքի մասին**

I. ՀամԼԿՅԵՄ հիմնական խնդիրներն արտադրության սոցիալ-լիստական ուսցիոնալացման շրջանում . . . . .	62
II. Յերիտասարդության արտադրական կյանքին մասնակցելու մասին . . . . .	65
III. Պրոֆտեխնիկական պրոպագանդայի և ինժեներական-տեխնիկական ուժերի հետ միասին աշխատելու մասին . . . . .	68
IV. Բանվոր յերիտասարդության արհեստակցական-տեխնիկական կրթության մասին . . . . .	69
V. Յերիտասարդության զործադրությունը, նրա դեմ պայքարելու միջոցները և յերիտասարդության զրավունքն արտադրության մեջ . . . . .	70
VI. Բանվոր յերիտասարդության աշխատավարձի մասին . . . . .	72
VII. Բանվոր յերիտասարդության աշխատանքի և առողջության պաշտպանությունը . . . . .	72



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038350



[304]

A  $\frac{11}{383}$



4-17-30 4.

